

## ՀԱԳՄՉ 04.10

Երկրորդ հրատարակություն  
1 հունվարի 2003թ.  
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

---

# Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ

---

---

Տնօրեն,  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ, UNMAS),  
2 United Nations Plaza, DC2-0650  
New York, NY 10017  
USA

Էլ. փոստ՝ [mineaction@un.org](mailto:mineaction@un.org)  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498  
Կայքէջ՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)

## Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործունեության միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանցից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի <http://www.mineactionstandards.org> կայքէջը՝ վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով, կամ ՄԱԿ-ի ՀՉ <http://www.mineaction.org> կայքէջում:

## Սեփականության իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործունեության միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրանից որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը վաճառքի ենթակա չէ:

Տնօրեն,  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (UNMAS, ՄԱԿԱԾ)  
2 United Nations Plaza, DC2-0650  
New York, NY 10017  
USA

Էլ. Փոստ՝ [mineaction@un.org](mailto:mineaction@un.org)  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498

---

## Բովանդակություն

Բովանդակություն .....	iii
Նախաբան .....	iv
Ակնազգեթման գործողությունների տերմինների, սահմանումների և հապավումների հավաքածու.....	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր .....	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ.....	3
Փոփոխությունների գրանցում .....	46

## Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելառճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

## Ականազերծման գործողությունների տերմինների, սահմանումների և հապավումների հավաքածու

### 1. Ծավալ

Տվյալ Հավաքածուն ներկայացնում է հակաականային գործունեության ոլորտում կիրառվող ականազերծման գործողությունների տերմինների, սահմանումների և հապավումների ամփոփագիրը: Եթե երկու կամ ավել այլընտրանքային սահմանումները գործածվում են ընդհանուր կիրառության մեջ, ապա այդ երկուսն էլ ներկայացված են սույն հավաքածուի մեջ:

Նշում՝ Սահմանումները կարող են փոփոխվել և նոր սահմանումներ կարող են ավելանալ սույն ՀԱԳՄՉ-ում: Սահմանումները պատշաճ ժամանակին հաստատելու նպատակով նոր կամ փոփոխված սահմանումների սահմանման ենթակա բառի կամ տերմինի հաջորդ տողում փակագծերում նշված կլինի համապատասխան ամսաթիվը: Ենթադրվում է, որ բոլոր այլ սահմանումները ընդգրկված են եղել ՀԱԳՄՉ 04.10-ի 2003թ-ի հունվարի 1-ի հրատարակության մեջ:

### 2. Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրապարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- a) ISO 3166. Երկրների անվանումների ներկայացման ծածկագրեր;
- b) ISO 9000:2000. Որակի կառավարման համակարգեր՝ հիմունքներ և բառարան;
- c) ISO 14000:2004. Բնապահպանության կառավարման համակարգեր՝ պահանջներ և կիրառման ուղեցույց;
- d) ISO 10241. Միջազգային տերմինաբանության չափորոշիչներ. մշակում և ձևակերպում;
- e) ISO Ուղեցույց 51. Անվտանգության հիմնահարցեր. ուղենիշներ դրանք չափորոշիչների մեջ ներառելու համար;
- f) ISO/IEC Ուղեցույց 2. Ստանդարտացում և փոխկապակցված գործողություններ. ընդհանուր բառարան;
- g) ISO/IEC Հրահանգ, մաս 2. Միջազգային չափորոշիչների մշակման մեթոդաբանություն;
- h) ISO/IEC Հրահանգ, մաս 3. Միջազգային չափորոշիչների կառուցվածքի և նախագծման կանոններ;
- i) ISO Չափորոշիչների ձեռնարկ՝ քանակ և միավորներ;

- 
- j) OHSAS 18001:1999. Աշխատանքային ապահովության և առողջության կառավարման համակարգեր. տեխնիկական տվյալներ;
  - k) OHSAS 18002:2000. Աշխատանքային ապահովության և առողջության կառավարման համակարգեր, OHSAS 18001-ի իրականացման ուղենիշներ;
  - l) ILO R164. Աշխատանքի և աշխատանքի հիգիենայի առաջարկություններ, 1981թ.;
  - m) ILO C155. Աշխատանքի և աշխատանքի հիգիենայի կոնվենցիա, 1981թ.;
  - n) AAP-6(V). NATO տերմինների և սահմանումների հավաքածու;
  - o) Սովորական զենքերի օգտագործման կոնվենցիա, (ՍՈՁ), Փոփոխված Արձանագրություն II և Արձանագրություն V;
  - p) ՄԱԿ-ի գենդերային ուղենիշները ականագերծման գործողությունների ծրագրերի համար:

### 3. Տերմիններ, սահմանումներ և հասկացվումներ

#### 3.1.

**Լքված պայթուցիկ հրանոթներ (ԼՊՆ) Abandoned Explosive Ordnance (AXO)**  
(2005)

**Պայթուցիկ հրանոթներ**, որոնք չեն օգտագործվել զինված հակամարտության ընթացքում, որոնք լքվել կամ գցվել են զինված հակամարտության մասնակցի կողմից և որոնք այլևս չեն գտնվում դրանք լքած կամ գցած կողմի վերահսկողության տակ: Լքված պայթուցիկ հրանոթները կարող են կամ չեն կարող լինել լիցքավորված, համակցված, հրահանները քաշված կամ այլապես նախապատրաստված օգտագործմանը: (ԿՈՁ արձանագիր V)

#### 3.2.

**Ընդունում acceptance**  
(2005)

**հովանավորի** կամ հովանավորի կողմից նշանակված ներկայացուցչի պաշտոնական ճանաչումն առ այն, որ **սարքավորումները** բավարարում են նշված պահանջները և համապատասխանում են **հակասկանային գործունեության** ծրագրերում կիրառմանը: Ընդունումը կարող է ճանաչվել նաև չկատարված աշխատանքների մասին նախազգուշացումներով:

#### 3.3.

**Մուտք գործելու արահետ access lane**

նշված անցուղի, որը տանում է դեպի **վտանգի գոտի** և մաքրվել է դեպի անհրաժեշտ կետ կամ տարածք **անվտանգ** շարժումն ապահովելու համար

#### 3.4.

**պատահար accident**

անցանկալի իրադարձություն, որը հանգեցնում է **վնասի**

Նշում՝ Փոփոխվել է OHSAS 18001:1999-ի սահմանումից:

#### 3.5.

**Հավատարմագրում accreditation**  
(2004)

Ընթացակարգ, որի միջոցով **սկանազերծող կազմակերպությունը** պաշտոնապես ճանաչվում է իրավասու և ունակ պլանավորել, կառավարել և իրականացնել սկանազերծման գործողություններ անվտանգ, արդյունավետ և օպերատիվ կերպով:

Նշում՝ Հակասկանային գործողությունների ծրագրերի մեծ մասի համար **ԱԳԱՄ** է այն մարմինը, որը կատարում է հավատարմագրում: Միջազգային կազմակերպությունները, ինչպես օրինակ ՄԱԿ կամ տարածքային մարմինները նույնպես կարող են ներկայացնել հավատարմագրման մեխանիզմներ:

Նշում՝ ISO 9000 համաձայն «**Հավատարմագրող**» մարմինը հավատարմագրում է «Վկայագիր» տրամադրող կամ գրանցող մարմիններին, որոնք կազմակերպություններին տրամադրում են ISO 9000 վկայագիր: ԱԳԱՄ-ի դեպքում հավատարմագրումը տարբերվում է այս ձևակերպումից և հիմնված է վերոհիշյալ հիմնական սահմանման վրա, որը պարզ և հասկանալի է համասկանային համայնքում:

#### 3.6.

**Հավատարմագրման մարմին accreditation body**

Մի կազմակերպություն, սովորաբար **ԱԳԱՄ-ի** մի տարր, որը պատասխանատու է **հավատարմագրման** ազգային համակարգի կառավարման և իրագործման համար:

**3.7.**

**Քարոզչություն advocacy positive**

*ականազերծման համատեքստում տերմինը վերաբերում է ....* հանրային աջակցությանը, առաջարկություններին կամ օգտակար հրապարակայնությանը, որի նպատակն է վերացնել կամ գոնե նվազեցնել **ականների** կամ **ՊՊՄ-ների ռիսկը** և **ազդեցությունը**:

**3.8.**

**Համաձայնագիր agreement**

(2004)

Պայմանագրի այլընտրանքային տերմին; համաձայնագիրը ներառում է պայմանագրի բոլոր վճռական տարրերը:

Նշում՝ իրավական իմաստով կիրառվող սահմանում:

**3.9.**

**Օտարում alienation**

*ականազերծման համատեքստում տերմինը վերաբերում է ....* մաքրված տարածքի հանձնումից հետո՝ սեփականության կամ գույքային իրավունքի փոխանցմանը:

**3.10.**

**Փոփոխված արձանագրություն II (ՓՄԻ) Amended Protocol II (APII)**

Անհամաչափ վնասակար կամ խառը հետևանքներ ունեցող որոշակի սովորական զինամթերքի օգտագործման արգելքի կամ սահմանափակումների վերաբերյալ կոնվենցիայի (ՍՈՁ) Փոփոխված արձանագրություն II (APII).

Նշում՝ Այն արգելում է բոլոր տեսակի չհայտանբերվող **հակահետևակային ականների** կիրառումը և կանոնակարգում է **ականների, ականային ծուղակների** և այլ սարքերի ավելի լայն դասակարգերի կիրառումը: ՀԱԳՄՉ նպատակով 5-րդ հոդվածը սահմանում է **ականապատված տարածքների նշագրման** և **մոնիտորինգի** պահանջները: 9-րդ հոդվածը սահմանում է **ականադաշտերի** և ականապատված տարածքների գրանցումն ու օգտագործումը: Տեխնիկական հավելվածը ի թիվս այլ բաների, ուղենիշներ է սահմանում տեղեկությունների գրանցման և ականադաշտերի ու ականապատված տարածքների միջազգային նշանների մասին:

**3.11.**

**Զինամթերք ammunition**

տես սպառազինություն

**3.12.**

**ականապաշտպանիչ սարք anti-handling device**

սարք, որը նախատեսված է պաշտպանելու **ականները** և, որը ականի մաս է կազմում կամ միացված է դրան, կամ կցված, կամ դրված է դրա տակ և ակտիվացնում է այն, երբ փորձ է արվում որևէ ձևով միջամտել կամ մտածված կերպով շարժել ականը: [MBT]

**3.13.**

**Հակահետևակային ականների արգելման կոնվենցիա (ՀՀԱՄԿ) Anti-Personnel Mine Ban Convention (APMBC)**

Օտտավայի կոնվենցիա

Ականների արգելման համաձայնագիր (MBT)

Նշում՝ Նախատեսում է լիակատար արգելք հակահետևակային ականների օգտագործման, կուտակման, արտադրման և փոխադրման վրա, ինչպես նաև դրանց վերացման վրա: ՀԱԳՄՉ փաստաթղթի նպատակով ՀՀԱԱԿ-ի 5-րդ հոդվածը սահմանում է ականապատված տարածքներում հակահետևակային ականների վերացման պահանջները: նշագրման և մոնիտորինգի պահանջները: 6-րդ հոդվածը մանրամասնում է համաձայնագրով պահանջվող թափանցիկության միջոցառումները, այդ թվում՝ ականապատված կամ ականապատման կասկած առաջացնող տարածքների տեղակայման և տեղի բնակչությանը նախազգուշացնելու համար ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկություններ:

### 3.14.

#### **Հակահետևակային ականներ (ՀՀԱ) Anti-Personnel Mines (APM)**

Ական, որը նախատեսված է պայթեցնել մարդու ներկայությամբ, մոտ հեռավորությամբ կամ շփման միջոցով և որը անկարող է դարձնում, վիրավորում է կամ սպանում մեկ կամ ավել մարդկանց:

Նշում՝ Զինամթերք, որը նախատեսված է հողի կամ էլ որևէ այլ մակերեսի տակ, վրան կամ կողքին տեղադրելու և մարդու կամ սարքավորման անմիջական ներկայության, մոտ հեռավորության կամ շփման միջոցով պայթեցնելու համար [MBT]:

### 3.15.

#### **Կիրառական հետազոտություն applied research**

Հետազոտություն, որ սնեովում է հստակորեն սահմանված խնդիրների և շուկայական հնարավորությունների վրա:

Նշում՝ Դրա կարևորագույն նպատակն է սահմանել հստակորեն սահմանված խնդիր լուծելու կիրառական տեխնոլոգիայի *հրազործելիությունը*՝ սահմանված պայմանների շրջանակում, օրինակ՝ ծախսեր, ժամանակ և **ռիսկ**:

### 3.16.

#### **Տարածքի կրճատում area reduction**

(2004)

Գործընթաց, որի միջոցով ականապատված համարվող նախնական տարածքը (**ՀԳՀ** ընթացքում կատարված ընդհանուր հետազոտման կամ տեղեկությունների հավաքման այլ միջոցառումների արդյունքում) փոքրացվում է:

Նշում՝ Տարածքը կրճատելու համար կարող է անհրաժեշտ լինել ականագերծման որոշակի գործողություններ կատարել, ինչպես օրինակ մուտքի ուղիների բացում, անմիջական և անընդունելի **վտանգ** ներկայացնող **ականների և ՉՁ ոչնչացում**: Այդպիսի ոչնչացումը սովորաբար նպատակ ունի ստանալ ավելի վստահելի տեղեկություններ **վտանգավոր տարածքի** չափերի մասին: Սովորաբար արժե **կայուն** կամ **կիսակայուն համակարգերով նշագրել** մյուս վտանգավոր տարածքները:

Նշում՝ Նույն կերպ, տարածքի կրճատումը, երբեմն արվում է ականագերծման գործողության շրջանակներում:

### 3.17.

#### **Աուդիտ/ստուգում Audit**

(2006)

Պարբերական գործընթաց կամ համակարգային ստուգում, որի նպատակն է հավաստիանալ, որ մասնագրերը համապատասխանում են փաստաթղթում նշված որակի չափորոշիչներին: Ստուգման նպատակն է հայտնաբերել փաստաթղթում նշված չափորոշիչների և կիրառված չափորոշիչների անհամապատասխանությունները: Այն կարող է նաև ցույց տալ, թե որքանով է փաստաթղթում նշված չափորոշիչը օգնում կամ խոչընդոտում այդ պահին ընթացող գործընթացներին:

**3.18.**

**Մարտի դաշտ Battlefield**

(2007)

վերաբերում է այն տարածքին, որտեղ հայտնաբերվել են **ՉՊՀ** և **ԼՊՀ**: Այն կարող է ներառել **մարտական** գործողությունների նախկին տարածքները, պաշտպանիչ դիրքերը և տեղամասերը, որտեղ թողնվել, արձակվել կամ գցվել են օդային ուղիներով բերված կամ հրետանու **զինամթերքները**:

**3.19.**

**Մարտական գործողությունների տարածքի վնասազերծում (ՄԳՏՎ) Battle Area Clearance (BAC)**

(2005)

Վտանգավոր այնպիսի տարածքի պարբերական և վերահսկվող մաքրում, որում առկա չեն **ականներ**:

**3.20.**

**Նիվելիրային նշագիր benchmark**

(2004)

*Մարդասիրական ակնազերծման համատեքստում այս տերմինը նշանակում է ...* ամրակցված տեղեկատու նշան է, որն օգտագործվում է նշագրված **վտանգի կամ վտանգավոր տարածքի** տեղը գտնելու համար: Այն, սովորաբար պետք է տեղադրված լինի վտանգավոր տարածքից ընու կարճ հեռավորության վրա:

Նշում՝ Նիվելիրային նշագրի անհրաժեշտությունը կարող է չլինել, եթե **կողմնորոշիչ ուղենիշը** բավական մոտ է **վտանգավոր տարածքի** շրջագծին:

**3.21.**

**Ռումբերի կենդանի միավոր Bomb Live Unit (BLU)**

(2004)

Ենթառազմամթերքի տեսակի նումենկլատուրայի մաս, օր.՝ BLU 26 կամ BLU 97:

**3.22.**

**փոքր ռումբ bomblet**

տես՝ **ենթառազմամթերք**

**3.23.**

**Ծուղակ ականներ booby trap**

**Պայթուցիկ** կամ ոչ պայթուցիկ սարքեր կամ այլ նյութեր, որոնք կանխամտածված կերպով տեղադրվել են վնասներ հասցնելու նպատակով այն ժամանակ, երբ տեղաշարժվում է ակնհայտորեն անվտանգ իրը կամ իրականացվում է անվտանգ որևիցե գործողություն: [AAP-6]

**3.24.**

**Սահմանային արահետ boundary lane**

**Վտանգավոր տարածքը** շրջագծող **մաքրված սահմանագիծ**:

**3.25.**

**դաշտ box**

(2005)

քառակուսի տարածք, որը ստեղծված է **ԱՀՇ** կողմից գննման ենթարկվելու նպատակով:

Նշում՝ Դաշտը սովորաբար ունենում է 10մ x 10մ չափեր, սակայն կարող են նախընտրելի լինել նաև այլ չափեր:

**3.26.**

**Հրահանգավորման վայր briefing area**

(2004)

*մարդասիրական ակնազերծման համատեքստում այս տերմինը նշանակում է ...* հստակ նկատելի վերահսկիչ կետ, որ որը նախատեսված է ակնազերծման տեղանք մուտք գործելու առաջին կետը:

Նշում՝ Հրահանգավորման վայրը ունի ակնադաշտի հատակագիծը, որտեղ նշված է դրա մաքրման ընթացիկ աստիճանը. մասշտաբները բավականաչափ մեծ են, որպեսզի հնարավոր լինի հրահանգավորել, ցույց տալ վերահսկիչ կետերի գտնվելու վայրը (մեքենաների կայանատեղի, առջին բուժօգնության կետ, պայթուցիկների պահեստավորման վայրեր, տարածքներ, որտեղ ընթանում են ականների մաքրման աշխատանքները և տարածություններ) և այցելուներին տրամադրվող անվտանգության սարքավորումների վայրերը:

**3.27.**

**Այրման վայր burning site**

(2005)

Տարածք, որտեղ թույլատրված է զինամթերքի և պայթուցիկների ոչնչացումը այրմամբ:

**3.28.**

**Ռիսկը ժխտված տարածք cancelled area**

(2004)

Տարածք, որը նախկինում գրանցվել է որպես **ռիսկային**, սակայն, որը ներկայումս համարվում է ռիսկը ժխտված՝ ինչը հետևանք չէ տարածքի **ակնազերծման** կամ **ԶԶ-ներից** մաքրման:

Նշում՝ Կարգավիճակի այս փոփոխությունը կարող է պայմանավորված լինել առավել ճշգրիտ և հավաստի տեղեկատվությամբ, որը կարող է ստացվել, օրինակ, տեխնիկական զննման արդյունքում, և որը, որպես կանոն, հաստատվում է **ԱԳԱՄ-ի** կողմից՝ տվյալ երկրի **օրենքներին** համապատասխան: Ռիսկը **ժխտված բոլոր տարածքների** վերաբերյալ տեղեկատվությունը պետք է մեկտեղվի՝ ներկայացնելով մանրամասն բացատրություն կարգավիճակի փոփոխության մասին:

**3.29.**

**ՈՍԶ (Կոնվենցիա որոշակի սովորական զինամթերքի վերաբերյալ)**

**CCW (the 1980 Convention on Certain Conventional Weapons)**

(2007)

Որոշակի զենքերի օգտագործման վերաբերյալ 1980թ-ի կոնվենցիա:

Նշում՝ Վնասակար կամ ընդհանուր ազդեցություններ ունեցող կոնվենցիոն որոշակի զենքերի օգտագործման վերաբերյալ Արգելքների և սահմանափակումների 1980թ-ի կոնվենցիա, որը փոփոխության է ենթարկվել 2001թ-ի դեկտեմբերի 21-ին: Այն ունի հինգ ‘արձանագրեր’: Դրանցից միայն երկուսն են վերաբերում ակնազերծման գործողություններին: **Փոփոխված Արձանագիր II** վերաբերում է հողային ականներին, ծուղակ ականներին և այլ սարքերին, իսկ **Արձանագիր V** վերաբերում է պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) խնդրին:

**3.30.**

**ՆԵԿ, Նորմավորման Եվրոպական կոմիտե (CEN, Committee European Normalisation)**

ՄԵԿ, Ստանդարտացման Եվրոպական կոմիտե (CEN, European Committee for Standardisation)

Նշում՝ ՄԵԿ-ի առաքելությունն է խթանել Եվրոպայում տեխնիկական կամավոր ներդաշնակությունը համաշխարհային մարմինների և Եվրոպական նրա այլ գործընկերների հետ համատեղ: Եվրոպական չափորոշիչները (որոնց հղում է կատարվում որպես EN (Եվրոպական նորմավորում, Europe Normalisation)) մի խումբ են ձևավորում, որն իր սեփական անընդհատությունն է ապահովում հոգուտ իր օգտագործողների:

**3.31.**

**ՄԱՀ (ՄԵՀ աշխատախմբի համաձայնագրեր), CWA (CEN Workshop Agreement)**  
(2007)

ՄԵՀ աշխատախմբի կողմից մշակված մի համաձայնագիր, որն արտացոլում է այդ համաձայնագրի բովանդակության համար պատասխանատու պարզորոշված անհատների և կազմակերպությունների կոնսենսուսը/միակարծությունը:

**3.32.**

**Հավաստագրման կոմիտե certification committee**

ՄԱԿԱՕ-ի կողմից նշանակված կոմիտե, որը կանոնավոր կերպով վերանայում է ՀԱԳԸԳ գործընթացի **ազդեցության** համապատասխանության բաղադրիչները ՄԱԿ-ի հավաստագրման ուղենիշների հետ՝ հիմնվելով դաշտից ՄԱԿ-ի **որակի ապահովման** դիտորդի տրամադրած հաշվետվությունների վրա:

Նշում՝ Որոշակի երկրի ՀԱԳԸԳ ազդեցության բաղադրիչի եզրահանգումների ընդունումը միջազգային հանրության կողմից կախված է ՄԱԿ-ի հավաստագրման կոմիտեի կողմից հավաստագրումից:

**3.33.**

**մաքրում clearance**

**(պայթուցիկ զինամթերքի մաքրում (ՊՁՄ)) (Explosive Ordnance Clearance (EOC))**

առաջադրանքներ կամ գործողություններ՝ **որոշակի տարածքի պայթուցիկ զինամթերքի (ՊՁ)** վնասը պակասեցնելու կամ դրանից ազատվելու նպատակով: [NATO Study 2187]

**3.34.**

**Մաքրված տարածք cleared area**

մաքրված հողատարածք cleared land  
(2004)

**ակնազերծող կազմակերպության** կողմից ֆիզիկապես և հետևողականորեն մշակված տարածք՝ **որոշակի խորության** վրայից բոլոր **ականների և ՊՊՄ** հեռացումը և/կամ **վերացումն** ապահովելու նպատակով:

Նշում՝ ՀԱԳՄՉ 09.10-ը մանրամասնում է **որակի համակարգը** (այսինքն այն կազմակերպությունը, ընթացակարգերն ու պարտավորությունները), որն անհրաժեշտ է պարզելու, որ հողատարածքները մաքրագերծվել են ակնազերծման կազմակերպության կողմից պայմանագրային իրենց պարտավորություններին համաձայն:

Նշում՝ Մաքրված տարածքը կարող է ներառել **տեխնիկական հետազոտության** գործընթացի ընթացքում մաքրված հողատարածքը: Այն կարող է ներառել **սահմանային ճանապարհները** կամ **մաքրված ճանապարհները**:

**3.35.**

**Ակնազերծ արահետ cleared lane**

Անվտանգության արահետ safety lane

Ընդհանրական տերմին, որը մատնանշում է ցանկացած արահետ՝ բացառությամբ **սահմանային արահետները**, որոնք ակնազերծվել են զննումն իրականացնող կամ ակնազերծող թիմի կողմից՝ ակնազերծված հողերին ներկայացվող չափանիշներին համապատասխան: Սրանք կարող են ներառել նաև վտանգի գոտուց դուրս գտնվող կամ վտանգ ներկայացնող տարածքի խաչվող կամ ստուգման արահետները:

**3.36.**

**Քլաստերային ռումբի բաժին (ՔՌԲ) Cluster Bomb Unit (CBU)**

ինքնաթիռի ընդլայնելի պահեստ, որը բաղկացած է դոզատորից և **ենթաազմամթերքից** [AAP-6]

ռումբ, որը պարունակում է ենթառագմամբերք, որոնք կարող են լինել **ականներ** (հակահետնակային կամ հակատանկային), ներթափանցող փոքր ռումբեր, բեկորային փոքր ռումբեր և այլն

**3.37.**

**Համագործակցություն collaboration**

*հակահետնակային գործունեության սարքավորումների գնման համատեքստում այս տերմինը վերաբերում է ....* այն գործողությանը, որը վերաբերում է միմիայն երկու կամ ավելի կազմակերպությունների կողմից ընդհանուր **սարքավորումների** գնմանը:

**3.38.**

**Commercial off the Shelf (COTS)**

*հակահետնակային գործունեության սարքավորումների գնման համատեքստում այս տերմինը վերաբերում է ....* այն **սարքավորումներին**, որոնք առկա են անմիջապես արտադրողի մոտ և չեն պահանջում որևէ այլ հետագա մշակումներ նախքան գործածության մեջ մտնելը՝ բացի չնչին ձևավորություններից:

**3.39.**

**համընդհանրություն commonality**

*հակահետնակային գործունեության սարքավորումների գնման համատեքստում այս տերմինը վերաբերում է ....* այն իրավիճակին, երբ անհատների կամ կազմակերպությունների խմբեր օգտագործում են համընդհանուր ընթացակարգեր և/կամ **սարքավորումներ**:

**3.40.**

**Համայնքի հետ կապի ապահովում community liaison**

Ականագերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովում - community mine action liaison (2004)

Կապի ստեղծում **ականներ/ՊՊՄ** տարածքներ ունեցող համայնքների հետ, որի նպատակն է տեղեկություններ փոխանակել ականների/ՊՊՄ առկայության և **ազդեցության** վերաբերյալ, հաշվետվական կապ ստեղծել **ականագերծման գործողությունների** ծրագրի հետ և մշակել **ռիսկի կրճատման** ռազմավարություններ: Համայնքի հետ կապի նպատակն է երաշխավորել, որ ականագերծման գործողությունների ծրագիրը պլանավորելիս, իրականացնելիս և **մոնիտորինգ** իրականացնելիս համայնքի կարիքները և գերակայությունները առաջին տեղում են:

Նշում՝ Համայնքի հետ կապը հիմնված է տեղեկությունների փոխանակման վրա և մասնակից է դարձնում համայնքներին որոշումների կայացման գործընթացին (**ականագերծումից** առաջ, ընթացքում և հետո)՝ առաջնահերթելու համար ականագերծման գործողությունները: Արդյունքում ականագերծման գործողությունների ծրագրերը լինում են ներառական, համայնքի կարիքներին միտված և ապահովում են համայնքի բոլոր հատվածների առավելագույն մասնակցությունը: Վերջինս ներառում է նախագծերի համատեղ պլանավորումը, իրականացումը, մոնիտորինգը և **գնահատումը**:

Նշում՝ Համայնքի հետ կապի նպատակներից մեկը անվտանգության միջանկյալ ռազմավարության համատեղ մշակումն է՝ խրախուսելով համար անհատական և համայնքային վարքագծի փոփոխությունը: Ռազմավարության նպատակն է կրճատել անհատների և համայնքի վրա ականների/ՊՊՄ ազդեցությունը մինչև **վտանգը** լիովին վերացվի:

**3.41.**

**համատեղելիություն compatibility**

*հակահետնակային գործունեության սարքավորումների գնման համատեքստում այս տերմինը վերաբերում է ....* **սարքավորման** կամ ապրանքի երկու կամ ավելի բաղադրիչների կամ ենթաբաղադրիչների ունակությանը՝ գոյություն ունենալու կամ գործելու միևնույն միջավայրում առանց միմյանց խանգարելու:

**3.42.**

**հայեցակարգի ձևավորում concept formulation**

**գնումների** գործընթացի առաջին փուլ, որը ջգվում է գաղափարի ի հայտ գալու պահից ընդհուպ մինչև նախնական ԳԿՀ-ն:

**3.43.**

**Պայմանագիր contract**

(2005)

Երկու կամ ավելի կողմերի միջև հատկորոշված պայմաններով պաշտոնական համաձայնագիր է, որում կա որևէ բան կատարելու խոստում՝ որևէ արժեքավոր նպաստի դիմաց, որը հայտնի է որպես փոխհատուցում:

**3.44.**

**կապալառու contractor**

(2004)

ցանկացած կազմակերպություն (պետական, ոչ պետական կամ առևտրային մարմին), որի հետ պայմանագիր է կնքվել՝ հակաականային գործունեության գործողություն իրականացնելու: Այն կազմակերպությունը, որը պատասխանատու է ընդհանուր պայմանագրի իրագործման համար, կոչվում է “առաջնային կապալառու”: Այլ կազմակերպությունները կամ կողմերը, որոնց առաջնային կապալառուն ներգրավում է ավելի ծավալուն պայմանագրի բաղադրիչներ իրագործելու, կոչվում են “ենթակապալառու”: Ենթակապալառուները պատասխանատու են առաջնային կապալառուի առջև և ոչ թե հեղինակավոր կազմակերպության:

**3.45.**

**Վերահսկման տարածք կամ կետ control area or point**

(2004)

բոլոր կետերը կամ տարածքները, որոնք օգտագործվում են **ակնազեղման տեղանքի** այցելուների և անձնակազմի տեղաշարժը վերահսկելու համար

**3.46.**

**ծախսերի արդյունավետություն cost-effectiveness**

համակարգի գործնական գործողության և դրա կիրառման ողջ ընթացքի ընդհանուր ծախսի միջև հարաբերակցության բալանսի գնահատական է:

**3.47.**

**“հավելյալ ծախսերով” պայմանագիր cost-plus contract**

(2004)

այն պայմանագիրն է, որում կապալառուին փոխհատուցվում են բոլոր այն ծախսերը, որոնք տեղի են ունեցել հատկորոշված ծավալի աշխատանքները կատարելիս, և վճարվում է լրացուցիչ գումար կամ փոխհատուցվող ծախսերի ստույգ տոկոսադրույքը:

**3.48.**

**Կրիտիկական անհամապատասխանություն critical non-conformity**

(2004)

Հետազոտման ընթացքում 1.0մ<sup>2</sup> մակերեսով հողակտորի կողմից վնասազերծման սահմանված պահանջներին չբավարարելը: ՀԱԳՄՉ սահմանում է կրիտիկական անհամապատասխանության երկու տեսակներ.

- ա) ականի կամ ՊՊՄ հայտնաբերում, և
- բ) ԱԳԱՄ կողմից սահմանված այլ կրիտիկական անհամապատասխանություններ:

**3.49.**

**ախտահանում decontamination**

փորձարկման տեղամասի նախապատրաստման ժամանակ կիրառվող փորձարկման առարկաներից, գործիքներից և օժանդակ պարագաներից անցանկալի աղտոտման հեռացման գործընթաց:

**3.50.**

**դեֆլագրացիա deflagration**

**պայթուցիկների** փոխարկումը գազային ապրանքների՝ պայթուցիկների մակերեսին կամ դրա մոտ (**դետոնացիա**)

**3.51.**

**Ապառազմականացում demilitarisation**

(2004)

**Զինամթերքն** իր նախնական նպատակային օգտագործման համար ոչ պիտանի ճանաչելու գործընթաց:

Նշում՝ Վերցվել է ՀԱԴԿ (NATO) Տեխնիկական սպասարկման և մատակարարման գործակալության (NAMSA), կողմից ընդունված սահմանումը, Փիթեր Քորթնի-Գրին, մայիս, 2000թ:

**3.52.**

**Ականազերծող deminer**

(2004)

Անձ, որը որակավորում ունի և **ականազերծման աշխատավայրում** աշխատառում է՝ **ականազերծման** գործողություններ նախաձեռնելու:

**3.53.**

**Ականազերծում demining**

Մարդասիրական ականազերծում

Գործողություններ, որոնք տանում են դեպի ականների և ՊՊՄ վտանգի վերացում, ներառյալ տեխնիկական հետազոտումը, քրտեզագրումը, ականազերծումը, նշագրումը, հետականազեծման փաստաթղթերի կազմումը, ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովումը և ականազերծված/մաքրված տարածքների հանձնումը: Ականազերծումը կարող է կատարվել տարբեր տեսակի կազմակերպությունների կողմից, ինչպես օրինակ հասարակական կազմակերպությունները, առևտրային ընկերությունները, ականազերծման գործողությունների ազգային թիմերը կամ զինվորական ստորաբաժանումները: Ականազերծումը կարող է հիմնված լինել արտակարգ իրավիճակների վրա կամ լինել զարգացումնային:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցում ականների և ՊՊՄ վնասազերծումը համարվում է ականազերծման գործընթացի միայն մի մասը:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցում ականազերծումը համարվում է հակաականային գործողությունների միայն մի մասը:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցում ականազերծում և մարդասիրական ականազերծում տերմինները համարժեք են:

**3.54.**

**Ականազերծման վթար demining accident**

**Պատահար ականազերծման աշխատանքային տեղամասում**, որտեղ կա **ականների կամ ՊՊՄ վտանգ** (տես **ականի պատահար**):

**3.55.**

**Ականազերծման վթարի արձագանքման պլան demining accident response plan**

Գրավոր պլան, որը կազմվում է ականազերծման յուրաքանչյուր աշխատանքային տեղամասի համար և նկարագրում է այն ընթացակարգերը, որոնք պետք է կիրառվեն տուժածներին ականազերծման վթարի տարածքից համապատասխան բուժական կամ վիրահատական հաստատություն տեղափոխելիս:

**3.56.**

**Ականազերծման պատահար demining incident**

Ականների կամ ՊՊՄ վտանգ պարունակող ականազերծման աշխատանքային տեղամասում տեղի ունեցած պատահար (տես ականի պատահար):

**3.57.**

**Ականազերծող կազմակերպություն demining organisation**

Այն կազմակերպությունը (պետական, հասարակական կամ առևտրային), որն իրականացնում է ականազերծման ծրագրեր կամ առաջադրանքներ: Ականազերծող կազմակերպությունը կարող է լինել հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

**3.58.**

**Ականազերծող ստորաբաժանում demining sub-unit**

(2004)

Ականազերծող կազմակերպության այլ անվանում ունեցող բաղադրիչ, որը գործառնակառուցում է հավաստագրվել է ականազերծման մեկ կամ մի քանի հանձնարարված առաջադրանքներ իրականացնելու համար, ինչպիսիք են տեխնիկական հետազոտությունները, ձեռքով մաքրումները, ՊՀՀ կամ ԱՀՇ թիմերի օգտագործումը:

**3.59.**

**Ականազերծող demining worker**

(2004)

Ականազերծման աշխատանքային տեղամասում աշխատողները:

**3.60.**

**ականազերծման տեղանք demining worksite**

(2004)

ցանկացած աշխատավայր, որտեղ իրականացվում են **ականազերծման** աշխատանքներ

Նշում՝ Ականազերծման տարածքները ներառում են այն աշխատավայրերը, որտեղ իրականացվում են հետազոտություններ, **մաքրման և պայթուցիկ զինամթերքի** վնասազերծման աշխատանքներ, որոնք ներառում են մաքրման աշխատանքների ժամանակ բացահայտված և վնասազերծված ականների և պատերազմից մնացած պայթուցիկ մնացորդների հետաքննման վնասազերծման կենտրոնացված տարածքները

Նշում՝ Հետազոտությունը, կապված ականազերծման տարածքի հետ, ներառում է ականներ և պատերազմից մնացած պայթուցիկ մնացորդներ պարունակող վտանգների և վտանգավոր տարածքների բացահայտման նպատակով իրականացված ընդհանուր հետազոտությունը:

**3.61.**

**Ապամոնտաժում demolition (dml)**

կառույցների, շինությունների կամ նյութերի քանդում՝ կրակի, ջրի, մեխանիկական կամ այլ միջոցների կիրառմամբ:

**3.62.**

**Ոչնչացման վայր demolition ground**

(2004)

Տարածք, որտեղ թույլատրված է զինամթերքի և պայթուցիկների ոչնչացումը պայթեցմամբ:

**3.63.**

**Տեղում ոչնչացում destroy (destruction) in situ**

Տեղում պայթեցում blow in situ

Զինամթերքի միավորի ոչնչացում պայթուցիկների միջոցով առանց այն շարժելու կամ տեղափոխելու հայտնաբերած տեղից: Սովորաբար պայթեցվում է շուրջբոլորը պայթուցիկ նյութի լիցք տեղադրելով:

**3.64.**

**Ոչնչացում destruction**

(2004)

**Զինամթերքի և պայթուցիկների** վերջնական չեզոքացում, որի արդյունքում դրանք այլևս չեն կարող շահագործվել ըստ նպատակային նշանակության:

**3.65.**

**Ոչնչացնող կազմակերպություն destruction organisation**

(2004)

Այն կազմակերպությունը (պետական, զինվորական կամ առևտրային), որն իրականացնում է **զինապաշարների ոչնչացման** ծրագրեր կամ առաջադրանքներ: Ոչնչացնող կազմակերպությունը կարող է լինել հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

**3.66.**

**Հայտնաբերում detection**

(2004)

*Մարդասիրական ակննազերծման համատեքստում այս տերմինը վերաբերում է ..... ակննների կամ ՊՊՄ-ների* առկայության բացահայտմանը ցանկացած ձևով:

**3.67.**

**դետոնացիա detonation**

**պայթուցիկների** արագ փոխարկումը գազային ապրանքների՝ պայթուցիկի միջով անցնող շոկային ալիքի միջոցով (դեֆլագրացիա): Սովորաբար, շոկային նման ալիքի արագությունը ավելի քան երկու մագնիտուդով ուժեղ է, քան արագ դեֆլագրացիան

**3.68.**

**դետոնատոր detonator**

սարք, որը պարունակում է զգայուն **պայթուցիկներ**, որոնք նախատեսված են **դետոնացիոն** ալիք առաջացնելու համար [AAP-6]

**3.69.**

**մշակում development**

նախագծի այն փուլը (և դրա հետ փոխկապակցված ծախսերը), որը նախորդում է արտադրությանը և վերաբերում է դիզայնի մշակմանը, որը բավարար է արտադրության մեկնարկի համար:

**3.70.**

**զինաթափել disarm**

**ակնառը** ապահով դարձնելու գործողություն՝ հեռացնելով դրա **հրահանը** կամ բոցավառիչը: Ընթացակարգը սովորաբար վերացնում է այրման շղթայի մեկ կամ ավելի օղակները:

**3.71.**

**Զինամթերքից ազատման վայր disposal site**

(2004)

Տարածք, որտեղ թույլատրված է զինամթերքի և պայթուցիկների ոչնչացումը պայթեցմամբ կամ այրմամբ:

**3.72.**

**ԴՆՏ (դինիտրոտուլուոլ) DNT (Dinitrotolulene)**

(2005)

ՏՆՏ արտադրության մնացորդային արդյունք և ՏՆՏ քայքայման նյութ: Այն սովորաբար տարբեր քանակներով առկա է ՏՆՏ պարունակող պայթուցիկ նյութերում: ԴՆՏ գոլորշու ճնշումը շատ ավելի բարձր է, քան ՏՆՏ ճնշումը, և որոշակի պայմաններում կարող է առավել հեշտ լինել հայտնաբերել ԴՆՏ, քան ՏՆՏ:

**3.73.**

**դոնոր donor**

Ֆինանսավորման բոլոր աղբյուրները, այդ թվում նաև ականապատված պետությունների կառավարությունը:

**3.74.**

**Ուսումնական զինամթերք drill munition**

(2005)

Զինամթերքի իներտ մոդել, որն արտադրված է հատկապես ուսուցման, ցուցադրման կամ հրահանգչական նպատակով:

**3.75.**

**Երկարակեցություն durability**

Իրի կամ նյութի կողմից ժամանակի ընթացքում և նախատեսված պայմաններում պահանջվող ֆունկցիան կատարելու հնարավորությունը: Երկարակեցությունը ժամանակի ընթացքում վստահելիության ֆունկցիան է:

Նշում՝ Երկարակեցությունը ներառում է դիմակայում դեգրադացիային, կոռոզիային, ճաքերին, դելամինացիային, ջերմային ցնցումներին, ջրին, օտար մարմնի վնասվածքի հետևանքներին:

**3.76.**

**Կրթում education**

(2004)

Սովորեցնելու և սովորելու միջոցով ժամանակի ընթացքում գիտելիքների (փաստերի, գաղափարների, ճշմարտության կամ սկզբունքների իմացություն կամ տիրապետում), վերաբերմունքի և փորձի տրամադրում և ձեռքբերում: [Օբսֆորդի անգլերենի համառոտ բառարան]:

**3.77.**

**Հանդերձանք ensemble**

Պաշտպանիչ հագուստի խումբ, որը նապատեսված է կրել որպես պաշտպանիչ միջոց:

**3.78.**

**Միջավայր environment**

Հանգամանքներ/պայմաններ, որոնցում գործում է կազմակերպությունը, այդ թվում նաև օդ, ջուր, հող, բնական ռեսուրսներ, ֆլորա, ֆաունա, մարդիկ և նրանց փոխհարաբերությունները [ISO 14001:2004 (E)]:

**3.79.**

**միջավայրային ասպեկտներ environmental aspects**

կազմակերպության գործունեության կամ արտադրանքի, կամ ծառայությունների տարրեր, որոնք կարող են առնչվել շրջակա միջավայրի հետ: [ISO 14001:2004 (E)]

**3.80.**

**Շրջակա միջավայրի գործոններ environmental factors**

Գործոններ, որոնք կապված են շրջակա միջավայրի հետ և ազդեցություն են ունենում ականից հոտի տեղափոխման, թիրախային հոտի հայտնաբերման կամ մարդկանց ու շների՝ անվտանգ և արդյունավետ կերպով աշխատելու կարողության վրա: (Օրինակ՝ քամի, անձրև, ջերմաստիճան, խոնավություն, բարձրություն, արև և բուսականություն): (Մույն սահմանումը կիրառելի է միայն ԱՀՇ օգտագործման համար):

**3.81.**

**միջավայրային ազդեցություն environmental impact**

(2006)

**միջավայրային** ցանկացած փոփոխություն, անկախ դրա վատ կամ նպաստավոր լինելու հանգամանքից, որն ամբողջությամբ կամ մասամբ ծագում է կազմակերպության **միջավայրային ասպեկտներից** [ISO 14001:2004 (E)]

**3.82.**

**Բնապահպանական ազդեցության գնահատում (ԲԱԳ) Environmental Impact Assessment (EIA)**

(2007)

**Հակասականային գործունեության համատեքստում** այս տերմինը վերաբերում է կենսաֆիզիկական, սոցիալական և այլ համապատասխան ազդեցությունները սահմանելու, կանխելու, գնահատելու և մեղմելու գործընթացին՝ նախքան որոշումների կայացումը և պարտավորությունների ստանձնումը:

**3.83.**

**Շրջակա միջավայրի կառավարման համակարգ (ՇՄԿՆ) Environmental Management System**

(EMS)

(2006)

Կազմակերպության կառավարման համակարգի մասը, որն օգտագործվում է սեփական բնապահպանական քաղաքականություն մշակելու և իրականացնելու, ինչպես նաև բնապահպանական հարցերը կառավարելու նպատակով [ISO 14001:2004 (E)]:

**3.84.**

**միջավայրային քաղաքականություն environmental policy**

(2006)

տնօրինության կողմից կազմակերպության ընդհանուր նկատառումներն ու ուղղությունները՝ կապված շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության հետ [ISO 14001:2004 (E)]

**3.85.**

**սարքավորում equipment**

Ֆիզիկական, մեխանիկական, էլեկտրական և/կամ էլեկտրանային համակարգ, որն օգտագործվում է օժանդակելու մարդկային գործողություններին, ընթացակարգերին և փորձին:

**3.86.**

**Եվրոպական նորմավորում (ԵՆ) European Normalisation (EN)**

(2005)

Տես ՆԵԿ (Նորմավորման Եվրոպական կոմիտե), CEN (Committee European Normalisation)

**3.87.**

**գնահատում evaluation**

(2006)

Արդյունքի կամ արդյունքների շարքի վերլուծություն՝ սահմանելու համակարգչային փաթեթի, սարքավորման կամ համակարգի քանակական և որակական արդյունավետությունն ու արժեքն այն միջավայրում, որում այն գործելու է:

Նշում՝ այս սահմանումը կիրառվում է, երբ օգտագործվում է սարքավորումների փորձարկման և գնահատման համատեքստում:

Ընթացիկ կամ ավարտված նախագծի, ծրագրի կամ քաղաքականության, դրա դիզայնի, իրագործման և արդյունքների հնարավորինս համակարգված և օբյեկտիվ որակումն է: Դրա խնդիրն է պարզորոշել նպատակների կարևորությունն ու իրականացումը, զարգացման գործունեությունը, արդյունավետությունը, ազդեցությունը և հաստատուն կայունությունը: Գնահատումը պետք է վստահելի և օգտակար տվյալներ ապահովի՝ հնարավոր դարձնելով քաղած դասերի ներառումը թե աջակցություն ստացողների, և թե դոնորների կողմից որոշումներ ընդունելու գործընթացում:

Նշում՝ Սահմանումը բերված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ, OECD) “Չարգացման աջակցության գնահատման սկզբունքներից”, ՋԱԿ (DAC), 1991թ.:

Մի գործընթաց, որը փորձում է հնարավորինս համակարգված կերպով և օբյեկտիվորեն պարզորոշել միջամտության առավելությունը կամ արժեքը:

Նշում՝ “Օբյեկտիվորեն” բառը ցույց է տալիս հավասարակշռված վերլուծություն ստանալու կարիքը՝ ճանաչելով շահագրգիռ տարբեր կողմերի (բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են ծրագրերով և գտնվում են դրանց ազդեցության ներքո, ներառյալ շահառուներին որպես առաջնային շահագրգիռ կողմեր) նախապաշարմունքը և հաշտեցնելով տեսանկյունները տարբեր աղբյուրների և մեթոդների օգտագործման միջոցով:

Նշում՝ Գնահատումը դիտվում է որպես ռազմավարական գործողություն:

Նշում՝ Այս սահմանումը կիրառվում է, երբ օգտագործվում է ծրագրերի առնչությամբ (*UNICEF-ի “Կանտոնակարգի և ծրագրավորման ձեռնարկ”*):

**3.88.**

**Պայթուցիկ նյութեր explosive materials**

**Վնասագերծող կազմակերպությունների** կողմից օգտագործվող բաղադրիչներ կամ օժանդակող նյութեր, որոնք պարունակում են որոշակի **պայթուցիկ նյութեր** կամ կարող են պայթյուն առաջացնել, ինչպիսիք են **պայթուցիչները** և **մարտական լիցերը**:

**3.89.**

**Պայթուցիկ հրանոթներ (ՊՀ) Explosive Ordnance (EO)**

Պայթուցիկ նյութեր, միջուկային բաժանիչներ, սինթետիկ նյութեր և կենսաբանական և քիմիական ազենտներ պարունակող բոլոր զինամթերքները: Մրանք ներառում են ռումբերը և զինամասերը, ուղղորդվող և բալիստիկական հրթիռները, հրետանին, ականանետները, հրթիռները և փոքր զինամթերքների **փամփուշտները**, բոլոր **ականները**, տորպեդները և խորքային ռումբերը, հրատեխնիկան, կուտակումները և բաշխիչները, փամփուշտների և պայթուցիկ նյութերի միջոցով գործարկվող սարքերը, էլեկտրոնային պայթուցիկ սարքերը, թաքնված և ինպրովիզացված պայթուցիկ նյութերը և գոյություն ունեցող բոլոր նման կամ հարակից իրերը կամ բաղադրիչները: [AAP-6]

**3.90.**

**Ազատում պայթուցիկ զինամթերքից (ԱՊԶ) Explosive Ordnance Disposal (EOD)**

(2005)

Պայթուցիկ զինամթերքի **հայտնաբերումը**, բնորոշումը, գնահատումը, **անվտանգ դարձնելը**, վերականգնումը և դրանից **ազատվելը**: ԱՊԶ կարելի է իրականացնել:

- ա) որպես **ականագերծման** գործողությունների սովորական մաս, ERW հայտնաբերելու դեպքում;
- բ) **Վտանգավոր տարածքներից** դուրս գտնված **ERW**-ից ազատվելու ժամանակ (սակարող է լինել ընդամենը **մեկ հատ ERW**, կամ ավելի մեծ քանակ որոշակի տարածքի ներսում);
- գ) **Պայթուցիկ զինամթերքից** ազատվելու համար, որը **վտանգավոր** է դարձել քայքայման, վնասման կամ **ոչնչացման** փորձ անելու ժամանակ:

### 3.91.

#### **Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ) Explosive Remnants of War (ERW)**

(2005)

Չպայթեցված զինամթերք (ՉԶ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ): (ԿՈԶ արձանագրություն V):

### 3.92.

#### **Պայթուցիկ նյութեր explosives**

Նյութ կամ նյութերի խառնուրդ, որն արտաքին ազդեցությունների տակ կարող է արագորեն էներգիա բաց թողնել գազերի և ջերմության տեսքով: [AAP-6]

### 3.93.

#### **ձախողում failure**

միջոցառում, որի ընթացքում որևէ համակարգ, սարքավորում, բաղադրիչներ կամ ենթաբաղադրիչներ չեն գործում այնպես, ինչպես հատկանշվել է նախապես:

Նշում՝ ձախողումները կարող են դասակարգվել ըստ պատճառի, աստիճանի, նպատակահարմարության, կախվածության և պատասխանատվության:

### 3.94.

#### **Իրագործելիության ուսումնասիրություն (ԻՈՒ) Feasibility Study (FS)**

Մի ուսումնասիրություն, որը սահմանում է ԱԱՀ-ի (Առաջադրանքների և արդյունքների հայտարարություն, Statement of Tasks and Outputs STO) իրագործելիությունը՝ տեխնոլոգիայի, ծախսերի և ժամանակի առումով:

### 3.95.

#### **դաշտային խմբագիր field editor**

անձ, որի հիմնական պատասխանատվությունը դաշտի հաշվիչների կողմից հավաքագրված տեղեկությունների ճշգրտության, համապատասխանության, դյուրըմբռնելիության և հստակության ապահովումն է:

Նշում՝ Դաշտային խմբագիրը պետք է սերտորեն աշխատի հետազոտող թիմերի հետ, որպեսզի ապահովի, որ վերանայման գործընթացն իրականացվի հետազոտությունն ավարտելուց հետո և, որ թիմերը գտնվելիս լինեն դիտարկվող համայնքի ընդհանուր տարածքի մոտակայքում:

### 3.96.

#### **“ստույգ գնով” պայմանագիր fixed price contract**

(2004)

պայմանագիր, որում ստույգ գումար է վճարվում կապալառուին՝ փոխհամաձայնեցված ժամանակահատվածում հատկորոշված ծավալի աշխատանք կատարելու կամ ապրանքի հատկորոշված քանակություն ապահովելու համար (ականագերծող թիմեր, ականներ հայտնաբերող շների (ԱՀՇ, MDD) թիմեր կամ մեխանիկական սարքավորումներ): Ստույգ գումարը ներառում է կապալառուի կողմից ապահովվող և տրամադրվող աշխատանքների, պարագաների և ծառայությունների ամբողջականությունը:

**3.97.**

**“Ֆորս մաժոր” force majeure**

(2004)

անկանխատեսելի հանգամանքներ, որոնք խոչընդոտում են որևէ կողմին իրագործելու պայմանագրով պահանջվող առաջադրանքը:

**3.98.**

**Լիարժեք մշակում (LU) Full Development (FD)**

Ընթացակարգում որը ներառում է ինժեներական բոլոր գործընթացները, **փորձարկումներն ու ստուգումները՝** վերջնական մանրամասն դիզայնը հաստատելու նպատակով՝ հնարավորություն ընձեռելով լիարժեք արտադրության մեկնարկին:

**3.99.**

**Հրահան fuze**

սարք, որը գործի է դնում **պայթյունի** շղթան [AAP-6]

**3.100.**

**Գենդերային ուղղորդում gender mainstreaming**

(2006)

Որևէ պլանավորված գործողության վրա կանանց և տղամարդկանց ազդեցության գնահատում: Ականագերծման գործողությունների դեպքում գենդերային ուղղորդման ուշադրության կենտրոնում պետք է լինի, որ երկու սեռերի մտահոգություններն ու փորձը հաշվի առնվի ծրագրերի նախագծման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման ժամանակ:

**3.101.**

**Հակաականային գործունեության ընդհանուր գնահատում (ՀԱԳԸԳ) General Mine Action Assessment (GMAA)**

(2004)

Շարունակական գործընթաց, որի միջոցով կարելի է **ականների կամ ՊՊՄ-ների** թունավորմամբ բոլոր զեկուցած և/կամ կասկածյալ տեղանքների, ինչպես նաև **պայթուցիկ վտանգների** քանակության և տեսակների, հողի տեղանքային առանձնահատկությունների, բուսականության և կլիմայի մասին տեղեկատվության համապարփակ գույքագրում իրականացնել; այդ թվում նաև **ականների** խնդրի ծավալի և անհատի, համայնքի ու երկրի վրա գործած **հետևանքների** գնահատման:

**3.102.**

**Բնորոշ պահանջ generic requirement**

Գործողություն և բնապահպանական առանձնահատկություններ, որոնք ընդհանուր կլինեն առաջարկվող **սարքավորումների** նախագծված բոլոր կիրառումների համար:

**3.103.**

**զեոհղում georeference**

գործընթաց, որով աղյուսակային տվյալներին ավելացվում են գրաֆիկական կոորդինատներ կամ անուղղակի հղումների այլ կոդեր, որպեսզի հնարավոր լինի տվյալների շարքի ընդհանուր տեղակայումների հիման վրա իրականացնել պարզ համեմատություն, խմբավորում և վերլուծություն:

**3.104.**

**USZ GIS**

**Աշխարհագրական և աշխարհատարածքային տեղեկատվական համակարգ** Geographical (or Geospatial) Information System

Համակարգչային տեխնիկայի, ծրագրերի, աշխարհագրական տվյալների և անձնակազմի համապարփակ հավաքածու, որի նպատակն է արդյունավետորեն պատկերահանել, պահպանել, թարմացնել, կիրառել, վերլուծել և ցուցադրել բոլոր տեսակի աշխարհագրական տեղեկությունները:

Նշում՝ ԱՏՀ թույլ է տալիս օգտագործողին գրաֆիկորեն դիտարկել բազմաշերտ տվյալներ, որոնք հիմնված են իրենց աշխարհագրական բաշխման և կապերի վրա: ԱՏՀ ներառում է տեղեկությունների տարբեր շերտերի միջև հարաբերությունները վերլուծելու հզոր միջոցներ:

### 3.105.

#### **Հողի նախապատրաստում ground preparation**

(2004)

**Ականապատ** կամ **վտանգավոր տարածքում** մեխանիկական միջոցներով հողի նախապատրաստում՝ վնասազերծման համար խոչընդոտների նվազեցման կամ հեռացման միջոցով (օր.՝ թաքնված լարեր, բուսականություն, մետաղական աղտոտումներ և պինդ հող)՝ հետագա **վնասազերծման** աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Հողի նախապատրաստումը կարող է ներառել կամ չներառել ականառումների պայթեցումը, վերացումը կամ հեռացումը:

### 3.106.

#### **խմբակային հարցազրույց group interview**

պաշտոնական հարցազրույց ականազերծվող համայնքի **հիմնական իրազեկողների** խմբի հետ՝ առ այն, թե ինչ պետք է հետազոտվի համայնքում

### 3.107.

#### **Ուղեցույց guide**

ՀԱԳՄՉ ուղեցույց, որը ներկայացնում է ընդհանուր կանոններ, սկզբունքներ, խորհուրդներ և տեղեկություններ:

### 3.108.

#### **Հանձնում handover**

(2005)

Գործընթաց, որով շահառուն (օր. **ԱԳԱՄ-ը** տեղական համայնքի կամ հողօգտագործողի անունից) ընդունում է **ականազերծված տարածքի** համար պատասխանատվությունը: «Օտարում» տերմինը երբեմն օգտագործվում է նկարագրելու մաքրված տարածքի հանձնումից հետո սեփականության իրավունքի փոխանցումը:

### 3.109.

#### **Հանձնման վկայագիր handover certificate**

Փաստաթուղթ, որով գրանցվում է **ականազերծված հողի հանձնումը**:

### 3.110.

#### **ապարատային ապահովում hardware**

Ֆիզիկական չափեր և քաշ ունեցող **սարքավորում**՝ ի տարբերություն **ծրագրային ապահովմանը**:

### 3.111.

#### **վնաս harm**

Ֆիզիկական վնասվածք կամ վնաս մարդկանց **առողջությանը** կամ վնաս գույքին կամ միջավայրին [ISO Guide 51:1999(E)]

### 3.112.

#### **վնասաբեր միջոցառում harmful event**

(2004)

Միջադեպ, որի ժամանակ վտանգավոր իրավիճակը հանգեցնում է վնասի [ISO Guide 51:1999(E)]:

**3.113.**

**վտանգ hazard**

վնասի հնարավոր աղբյուր [ISO Guide 51:1999(E)]

**3.114.**

**Վտանգի (վնագավոր) տարածք hazard(ous) area**

Ականապատ տարածք contaminated area

Ընդհանուր տերմին է բոլոր այն տարածքների համար, որոնք չեն օգտագործվում **ականների և որևէ այլ ՉՁ** ենթադրվող կամ փաստացի առկայության պատճառով:

**3.115.**

**Վտանգի նշագրեր hazard marker**

Առարկա(ներ), բացառությամբ **վտանգի նշաններից**, որոնք օգտագործվում են ցույց տալու համար **ականների և ՉՁ վտանգի տարածքի** սահմանները: Վտանգի նշագրերը պետք է համապատասխանեն **ԱԳԱՄ-ի** կողմից սահմանված մասնագրերին:

**3.116.**

**Վտանգի նշագրման համակարգ hazard marking system**

Միջոցառումների համադրություն (նշաններ և խոչընդոտներ), որոնց նպատակն է նախագգուշացնել հանրությանը և պաշտպանել **ականների և ՉՁ վտանգից**: Համակարգը կարող է ներառել նշանների կամ նշագրերի կիրառում կամ ֆիզիկական խոչընդոտների կառուցում:

**3.117.**

**Վտանգի նշան hazard sign**

Մշտական պատրաստված նշան, որը տեղադրվում է նշագրման համակարգի շրջանակներում և նպատակ ունի նախագգուշացնել հանրությանը **ականների** առկայության մասին:

**3.118.**

**Վտանգավոր իրավիճակ hazardous situation**

(2004)

Հանգամանք, որում մարդիկ, սեփականությունը կամ շրջակա միջավայրը ենթարկվում են մեկ կամ ավելի վտանգների [ISO Guide 51:1999(E)]:

**3.119.**

**առողջություն health**

(2004)

աշխատանքի առումով նշանակում է ոչ թե զուտ հիվանդության կամ թուլության բացակայություն, այլ ներառում է նաև առողջության վրա ազդող ֆիզիկական և հոգեկան տարրերը, որոնք անմիջականորեն կապված են աշխատանքի ապահովության և հիգիենայի հետ [ILO C155]

**3.120.**

**մարդասիրական ականագերծում humanitarian demining**

տես **ականագերծում** (ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցերում “ականագերծում” և “մարդասիրական ականագերծում” տերմինները փոխարինում են միմյանց):

**3.121.**

**հետևանք impact**

սոցիալական և տնտեսական զրկանքների մակարդակը, որին ենթարկվում է համայնքը՝ **ականների և ՊՊՄ-ների վտանգի և վտանգավոր գոտիների** կողմից առաջացրած **վնասի կամ վնասի ռիսկի** արդյունքում:

Նշում՝ **հետևանքը** հետևյալի արդյունքն է.

- a) ականների/ՊՊՄ-ների վտանգի առկայությունը համայնքում;
- b) ենթակառուցվածքների, օրինակ՝ ճանապարհների, շուկաների և այլն, օգտագործման հետ փոխկապակցված **անհանդուրժելի ռիսկ**;
- c) ապրուստի միջոցների, օրինակ՝ գյուղատնտեսական հողերի, ջրային աղբյուրների և այլն, օգտագործման հետ փոխկապակցված **անհանդուրժելի ռիսկ**;
- d) վերջին երկու տարիների ընթացքում **ականների և ՊՊՄ-ների պատահարներից** սուսժամների քանակը:

**3.122.**

**ազդեցությունից զերծ impact free**

(2004)

տերմինը տարածվում է այն երկրների վրա, որոնք կարող են դեռևս **ականներ** ունենալ, սակայն **ականապատ տարածքները** բացասական սոցիալ-տնտեսական **ազդեցություն** չեն ունենում համայնքների վրա, օր.՝ ականները կարող են լինել հեռավոր, նշագրված և չբնակեցված վայրերում:

**3.123.**

**Ազդեցության հետազոտում impact survey**

Տես **Ականների ազդեցության հետազոտում (ԱԱՀ)**

**3.124.**

**Հակաականային գործունեության տեղեկատվության կառավարման համակարգ (ՀԱՏԿՀ)**

**Information Management System for Mine Action (IMSMA)**

(2007)

Նշում՝ սա ՄԱԿ-ի նախընտրած տեղեկատվական համակարգն է՝ ՄԱԿ-ի աջակցությամբ դաշտային ծրագրերում վճռական տվյալների կառավարման համար: ՀԱՏԿՀ-ն օգտագործողներին օգնություն է ապահովում տվյալների հավաքագրման, տվյալների պահեստավորման, հաշվետվությունների, տեղեկատվության վերլուծության և նախագծերի կառավարման գործողություններում: Դրա առաջնահերթ օգտագործողներն են **ՀԱԿ-երի** անձնակազմը՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում, սակայն համակարգն օգտագործվում է նաև որպես աջակցություն բոլոր մակարդակներում **հակաականային գործունեության** նախագծերի իրականացնողներին և **ականազերծման կազմակերպություններին**:

**3.125.**

**միջադեպ incident**

(2004)

Իրադարձություն, որը **պատահարի** տեղիք է տալիս կամ պատահարի հանգեցնելու հնարավորություն ունի

**3.126.**

**Իներտ inert**

Զինամթերք, որը չի պարունակում պայթուցիկ, պիրոտեխնիկական, արցունքաբեր, ռադիոակտիվ, քիմիական, կենսաբանական կամ այլ թունավոր բաղադրիչներ կամ նյութեր:

Նշում՝ Իներտ զինամթերքը տարբերվում է ուսումնական զինամթերքից, քանի որ պարտադիր չէ, որ իներտ զինատեսակն արտադրվի հատկապես ուսումնական նպատակներով: Զինամթերքի իներտ վիճակը կարող է լինել այն անվտանգ դարձնելու կամ վտանգավոր բաղադրիչները կամ նյութերը որևէ այլ կերպ վնասագերծելու արդյունքը: Այն վերաբերում է նաև արտադրության ժամանակ զինամթերքի վիճակին, երբ այն դեռևս չի լցվել կամ հագեցվել պայթուցիկով կամ այլ վտանգավոր բաղադրիչներով կամ նյութերով:

### 3.127.

#### Ստուգազննում inspection

(2004)

Ապրանքի կամ ծառայության մեկ կամ մի քանի բաղադրիչների դիտարկում, չափում, ստուգում, փորձարկում, **զննահատում** կամ չափագրում և այդ ամենի համեմատում սահմանված պահանջների հետ՝ համապատասխանությունը որոշելու նպատակով:

### 3.128.

#### Ստուգող մարմին inspection body

Կազմակերպություն, որն **ԱԳԱՄ** անունից իրականացնում է հետմաքրման **ՈՎ**՝ կիրառելով պատահական **ընտրանքի** ստացման ընթացակարգերը, կամ **ստուգման** այլ պատշաճ և համաձայնեցված մեթոդներ:

### 3.129.

#### ապահովագրություն insurance

Վնասի կամ կորստի (գույքի, կյանքի կամ անձի) դեպքում փոխհատուցում վճարելու վերաբերյալ պայմանավորվածություն:

Նշում՝ Ապահովագրությունը ներառում է բոլոր աշխատողների համար բժշկական, մահվան և հաշմանդամության համապատասխան ծածկույթ, ինչպես նաև ապահովագրություն երրորդ կողմի պատասխանատվությունից

Նշում՝ Նման ապահովագրությունը պարտադիր չէ, որ իրականացվի ապահովագրական գործակալի կամ ընկերության միջոցով, եթե իհարկե պայմանագիրն այլ բան չի պահանջում: Ինքնապահովագրում (երաշխիքային) ծրագրեր, եթե դրանք պաշտոնապես հիմնված են ընդունված ակտուարական սկզբունքների վրա և համապատասխան ծածկույթ են ապահովում, ապա կարող են ընդունելի տարբերակ հանդիսանալ:

### 3.130.

#### Նպատակային օգտագործում (հողատարածքի) intended use (land)

Ականագերծման գործողություններից հետո հողատարածքի օգտագործում:

Նշում՝ նպատակային օգտագործում՝ արտադրանքի, գործընթացի կամ ծառայության օգտագործում՝ մատակարարի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն: [ISO Ուղենիշ 51:1999(E)]

Նշում՝ հողի նպատակային օգտագործումը հարկավոր է ներառել **մաքրման** առաջադրանքի նկարագրության և մաքրման առաջադրանքի **հանձնման** փաստաթղթերում:

### 3.131.

#### փոխանակելիություն interchangeability

**հակաականային գործունեության սարքավորումների զնման համատեքստում այս տերմինը վերաբերում է ...** այն առկա իրավիճակին, երբ **սարքավորման** երկու կամ ավելի պարագաներ ունեն այնպիսի գործնական և ֆիզիկական յուրահատկություններ, որոնք հավասար են իրենց գործողությամբ և երկարակեցությամբ, և ընդունակ են միմյանց փոխարինելու՝ առանց ձևափոխելու հենց այդ պարագաները կամ հարակից պարագաները, հարմարեցման/հավաքման բացառությամբ, և անկախ դրանց չափերից և գործողությունից:

### 3.132.

#### Միջանկյալ կետ intermediate point

(2004)

Միմյանցից 50 մետր հեռավորությունը գերազանցող **շրջադարձերի** միջև օգտագործվող **հետազոտման նշագրեր:**

### 3.133.

#### **Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ) International Mine Action Standards (IMAS)**

Միջազգային համայնքի անունից ՄԱԿ-ի կողմից կազմված փաստաթղթեր, որոնց նպատակն է բարձրացնել **հակաականային գործողությունների** անվտանգությունը և արդյունավետությունը՝ ուղեցույց տրամադրելու, սկզբունքներ սահմանելու և որոշ դեպքերում, միջազգային պահանջներ և մասնագրեր սահմանելու միջոցով:

Նշում՝ ՀԱԳՄՉ հանդես են գալիս որպես տեղեկատու փաստաթղթերի համակարգ, և որոշ դեպքերում պահանջում են, որ ականագերծման ծրագրերի և նախագծերի սպոնսորները և ղեկավարները ապահովեն և ցուցադրեն արդյունավետության և **անվտանգության** համաձայնեցված մակարդակ:

Նշում՝ ՀԱԳՄՉ ապահովում են մեկ միասնական/ընդհանուր լեզու, և առաջարկում են տվյալների հավաքման, մշակման և վարման ձևաչափը և կանոնները, որը թույլ է տալիս ազատորեն փոխանակել տեղեկությունները: Այս փոխանակումից շահում են այլ ծրագրեր և նախագծեր: Բացի այդ, տեղեկությունների փոխանակումը օգնում է կատարել ռեսուրսների հավաքագրում, գերակայությունների սահմանում և կառավարում:

### 3.134.

#### **Մասնագրերի միջազգային կազմակերպություն (ISO, International Organization for Standardization)**

Նշում՝ 130-ից ավել երկրների ազգային մարմիններից կազմված համաշխարհային ֆեդերացիա: Դրա աշխատանքի արդյունքում ստեղծվում են միջազգային համաձայնագրեր, որոնք հրատարակվում են որպես ISO **չափորոշիչներ և ուղեցույցներ**: ISO-ն ոչ պետական/հասարակական կազմակերպություն է և իր կողմից մշակված չափորոշիչները կամավոր են, չնայած դրանցից մի քանիսը (հիմնականում նրանք, որոնք վերաբերում են **առողջապահության, ապահովության** և բնապահպանական խնդիրներին) ճանաչվել և ընդունվել են շատ երկրների կողմից որպես իրենց կանոնակարգման հիմքերի մի մաս: ISO-ն աշխատում է մարդկային գործողությունների ողջ շրջանակում, և դրա խնդիրներից ու գործընթացներից շատերը, որոնք նպաստում են **հակաականային գործունեությանը**, ունեն համապատասխան չափորոշիչ: ISO-ի չափորոշիչների և ուղեցույցների ցանկը բերված է ISO կատալոգում՝ [www.iso.ch/info/catinfo/html](http://www.iso.ch/info/catinfo/html) կայքէջում:

Նշում՝ Հակաականային գործունեության վերանայված չափորոշիչները մշակվել են՝ ISO-ի չափորոշիչներին և ուղեցույցներին համահունչ լինելու նպատակով: ISO-ի ֆորմատի և լեզվի/ոճի որդեգրումը նշանակալի առավելություններ է ընձեռում, այդ թվում նաև արտաքին տեսքի հետևողականություն, միաջգայնորեն ճանաչված տերմինների կիրառում և միջազգային, ազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների կողմից ավելի լայն ճանաչում, որոնք արդեն ընտելացել են ISO-ի չափորոշիչների և ուղեցույցների շարքին:

### 3.135.

#### **Ինվազիվ մեքենա Intrusive machine (2007)**

**Հակաականային գործունեության համատեքստում** այս տերմինը վերաբերում է մեքենասարքավորումներին, որոնք նախագծված են **վտանգավոր տարածքներում** աշխատելու համար, մինչդեռ **“ոչ ինվազիվ մեքենա”** տերմինը վերաբերում է այն մեքենասարքավորումներին, որոնք նախագծված են **վնասագերծված կամ անվտանգ տարածքներից** աշխատելու համար, իսկ նրանց **մեխանիկական գործիքներն** աշխատում են **վտանգավոր տարածքներում**:

**3.136.**

**Ներդրումների գնահատական investment appraisal**

Ծախսերի նպատակները սահմանելու գործընթացն է, այդ նպատակներին հասնելու այլընտրանքային ուղիների պարզորոշում և գնահատում, արդյոք որ ուղու միջոցով կստացվի դրամի ամենաբարձր արժեքը:

**3.137.**

**Հիմնական իրազեկողներ key informants**

անձինք, ովքեր համեմատաբար լավ են իմանում համայնքի և դրա շուրջ գտնվող վտանգավոր գոտիները.

Նշում՝ Հիմնական իրազեկողները ներառում, սակայն չեն սահմանափակվում համայնքային առաջնորդներով, ականներից տուժած անձանցով, դպրոցի ուսուցիչներով, հոգևոր առաջնորդներով և այլն

**3.138.**

**Արցունքաբեր զինամթերք lachrymatory ammunition**

Արցունքաբեր զինամթերքը պարունակում է քիմիական բաղադրիչներ, որոնք նախատեսված են որոշ կարճ ժամանակով արցունքներ առաջացնելու կամ աչքի լորձաթաղանթը գրգռելու միջոցով մարդուն անկարող դարձնելու համար:

**3.139.**

**Ականների ազդեցության հետազոտում (ԱԱՀ) Landmine Impact Survey (LIS)**

**Ազդեցության հետազոտում impact survey**

(2004)

**Ականների և ՉՁ փաստացի կամ ենթադրյալ ներկայության սոցիալտնտեսական ազդեցության** գնահատում, **հսկաականային գործողությունների** ծրագրերի և նախագծերի պլանավորման և առաջնահերթությունների սահմանման նպատակով:

**3.140.**

**համաձայնության նամակ letter of agreement**

(2004)

պայմանագրի ավելի հասարակ ձև, որը համաձայնության կարևոր կետերն է նշում առանց բոլոր մանրամասների զետեղման: Այն կարող է օգտագործվել որպես պաշտոնական պայմանագրի նախատիպ կամ էլ որոշ դեպքերում կարող է գործածվել առավել պաշտոնական պայմանագրի փոխարեն:

**3.141.**

**2-րդ մակարդակի ուսումնասիրություն level 2 survey**

Այս տերմինը նախկինում կիրառվել է **տեխնիկական ուսումնասիրության** փոխարեն:

**3.142.**

**լիցենզիա licence**

(2004)

**ականազերծման համատեքստում, տերմինը նշանակում է .....** վկայական, որը տրվում է **ԱԳԱՄ-ի** կողմից և վկայում կառույցի/մարմնի կարողությունը: Օրինակ քանդման տարածքի համար կարող է լիցենզիա տրվել որոշակի սահմանափակ թվով պայթուցիկների օգտագործման համար; պայթուցիկ զինամթերքի պահեստը կարող է լիցենզիա ստանալ որոշակի զինամթերքի տեսակների և քանակների համար: **Ականազերծող կազմակերպությունները** ԱԳԱՄ-ի կողմից լիազորված հավաստագրող մարմնից ստանում են կազմակերպական կամ գործառնական **հավաստագրում:**

**3.143.**

**Տեղական պահանջ local requirement**

Առաջարկված **սարքավորումների** գործողությունն ու առանձնահատկությունները, որոնք արտացոլում են տեղական միջավայրի պայմանները, գործող ընթացակարգերը և գործող պահանջները:

**3.144.**

(2004)

**Կազմակերպչական հարցեր logistic disposal**

*Ականազերծման համատեքստում այս տերմինը նշանակում է ... Պայթուցիկների և զինամթերքի* հեռացում՝ օգտագործելով մի շարք մեթոդներ (այս մեթոդները պարտադիր չէ, որ ներառեն **ռչնչացում**): Մրա համար կարող է հարկ լինել կամ չլինել անվտանգ դարձնել գործընթացների կիրառումը:

**3.145.**

**Հողակտորի չափ lot size**

*Մարդասիրական ականազերծման կոնտեքստում տերմինը վերաբերում է...ստուգման* համար առաջադրված տարածքին (որն իրենից ներկայացնում է **մաքրված հողատարածքի** 1.0մ<sup>2</sup> մակերես ունեցող մի շարք միավորներ):

**3.146.**

**Մեքենասարքավորում machine**

(2007)

*Հակասականային գործունեության համատեքստում* այս տերմինը վերաբերում է ականազերծման գործողություններում շահագործվող մեխանիկական սարքավորումների որևէ միավորին:

**3.147.**

**Զինապահեստ magazine**

(2004)

*Հակասականային գործողությունների համատեքստում, տերմինը վերաբերում ...* ցանկացած շենքի, կառույցի կամ կոնտեյների, որը պիտանի /հաստատված/ է պայթուցիկ նյութեր պահելու համար:

**3.148.**

**պահպանողականություն maintainability**

**սարքավորումը**, բաղադրիչը կամ ենթաբաղադրիչը նշված պայմաններում օգտագործելու, պահպանելու կամ որոշակի վիճակի վերականգնելու հնարավորությունը, երբ պահպանումը նշված պայմաններում և սահմանված ընթացակարգերի ու ռեսուրսների միջոցով իրականացվում է այն աշխատակիցների կողմից, որոնք ունեն որոշակի հմտություններ:

**3.149.**

**նշագրում marking**

միջոցառման կամ միջոցառումների համակցության իրականացում՝ **վտանգի** տեղը կամ **վտանգավոր գոտիների** սահմանագծերը սահմանելու համար: Մա կարող է ներառել ազդանշանների, ներկված նշանների և այլնի կիրառում կամ ֆիզիկական խոչընդոտների տեղադրում

**3.150.**

**նշագրման համակարգ marking system**

համաձայնեցված կոնվենցիա **վտանգների** կամ **վտանգավոր գոտիների** նշագրման համար

**3.151.**

**Մեխանիկական ականազերծման գործողություններ mechanical demining operations**

(2007)

Վերաբերում է ականազերծման գործողությունների ընթացքում **մեքենասարքավորումների** օգտագործմանը և կարող է ներառել մեկ **մեքենասարքավորում**, որն օգտագործում է մեկ **մեխանիկական գործիք**, մեկ մեքենասարքավորում, որն օգտագործում է բազմաթիվ գործիքներ կամ մի շարք մեքենասարքավորումներ, որոնք օգտագործում են բազմաթիվ գործիքներ:

**3.152.**

**Մեխանիկական ականազերծման միավոր mechanical demining unit**

(2007)

մեկ **մեքենասարքավորում** կամ ավելի քան մեկ մեքենասարքավորում, որոնք օգտագործվում են որպես համակարգի մի մաս, օրինակ որպես դիմացի բարձման մեքենա և հետազոտություններ իրականացնող միավոր:

**3.153.**

**Մեխանիկական գործիքներ mechanical tools**

(2007)

այն աշխատանքային բաղադրիչ(ներ)ը, որոնք ամրացված են մեքենասարքավորմանը, ինչպիսիք են ականազերծիչները, լծակները, ֆիլտրները/ցանցերը, գլանները, հողափորները, գուրանները, մագնիսները և այլն: Մեկ մեքենասարքավորման մեջ կարող են օգտագործվել մի շարք **գործիքներ**, որոնք կարող են լինել հաստատուն կամ միմյանց փոխադարձաբար փոխարինող:

**3.154.**

**Բուժանձնակազմ medical support staff**

Ականազերծող կազմակերպության աշխատողները, որոնք նախատեսված են վթարի արդյունքում վիրավորված ականազերծողներին ցուցաբերելու առաջին բուժօգնություն և հետագա բուժում, անցել են համապատասխան դասընթացներ և ունեն անհրաժեշտ սարքավորումներ:

**3.155.**

**Փոխհամաձայնության հուշագիր Memorandum of Understanding (MOU)**

Մի փաստաթուղթ, որն օգտագործվում է մի իրավիճակ կամ գործողություն սատարելու համար, երբ մտադրություն կա ոչ թե միջազգային օրենքում պաշտոնական իրավունքներ և պարտավորություններ ստեղծելու, այլ չպարտադրող ձևով կարևորության պարտավորություններն արտահայտելու:

**3.156.**

**ական mine**

**Զինամթերք**, որը նախատեսված է հողի կամ էլ որևէ այլ մակերեսի տակ, վրան կամ կողքին տեղադրելու և մարդու կամ սարքավորման անմիջական ներկայության, մոտ հեռավորության կամ շփման միջոցով պայթեցնելու համար: [MBT]

**3.157.**

**Ականային պատահար mine accident**

Ականազերծման աշխատավայրից հեռու պատահար, որն **ականի կամ ՊՊՄ-ի** վտանգ է ընդգրկում (տես ականազերծման պատահար):

**3.158.**

**հակաականային գործունեություն mine action**

(2004)

Գործողություններ, որոնք նպատակ ունեն մեղմել **ականների և ՊՊՄ** սոցիալտնտեսական և բնապահպանական **ազդեցությունը**:

Նշում՝ Հակասկանային գործողությունը չի ենթադրում միայն ականազերծում: Այն վերաբերում է նաև մարդկանց և հասարակությանը և ականների և ՊՊՄ աղտոտման թողած ազդեցությանը: Համասկանային գործողության նպատակն է կրճատել ականների և ՊՊՄ վտանգը, այն հասցնելով այնպիսի աստիճանի, որը թույլ կտա, որ մարդիկ ապրեն անվտանգ կյանքով, սոցիալտնտեսական և առողջապահական ոլորտները կգարգանան առանց ականների և ՊՊՄ աղտոտման արդյունքում ստեղծվող խոչընդոտների և տուժածների կարիքները կբավարարվեն: Հակասկանային գործողությունը պարունակում է գործողություններ հետևյալ հինգ փոխլրացնող խմբերը.

- a) ԱՎԻ;
- b) մարդասիրական ականազերծում, այսինքն՝ ականների և ՊՊՄ-ների հետազոտում, քարտեզգրում, տեղանշում և մաքրում;
- c) աջակցություն տուժածներին, այդ թվում նաև առողջության վերականգնում և վերաինտեգրում;
- d) կուտակված պաշարների վնասազերծում;
- e) ՀՀԱ-ների կիրառման դեմ ուղղված քարոզչություն:

Նշում՝ Պահանջվում են մի շարք այլ օժանդակող գործողություններ նշյալ հակասկանային հինգ բաղադրիչների իրականացման համար, այդ թվում գնահատում և պլանավորում, ռեսուրսների հավաքագրում և առաջնահերթում, տեղեկատվության կառավարում, մարդկային հմտությունների զարգացում և դեկավար անձնակազմի ուսուցում, որակի կառավարում և արդյունավետ, ճիշտ և անվտանգ սարքավորումների կիրառում:

### 3.159.

**Հակասկանային գործողությունների կենտրոն (ՀԱԳԿ) Mine Action Centre (MAC)**

**Հակասկանային գործողությունների համակարգման կենտրոն (ՀԱԳՀԿ) Mine Action Coordination Centre (MACC)**

(2004)

Կազմակերպություն, որն իրականացնում է ԱՎԻ ուսուցում, ականապատ տարածքների հետազոտում, ականների մասին տվյալների հավաքում և կենտրոնացում և համակարգում է հակասկանային գործողությունների տեղական պլանները արտաքին գործակալությունների, ՀԿ-երի կամ տեղական ականազերծողների հակասկանային գործողությունների հետ: [ՄԱԿ-ի տերմինաբանական բուլետեն No. 349]: Հակասկանային գործողությունների ազգային ծրագրերի համար ՀԱԳԿ/ՀԱԳՀԿ սովորաբար գործում է որպես ԱԳԱՄ-ի գործառնական գրասենյակ:

### 3.160.

**Հակասկանային գործողությունների համակարգման կենտրոն (ՀԱԳՀԿ)**

**Mine Action Coordination Centre (MACC)**

տես Հակասկանային գործողությունների կենտրոն (ՀԱԳԿ) **Mine Action Centre (MAC)**

### 3.161.

**Հակասկանային գործունեության կազմակերպություն mine action organisation**

(2004)

Վերաբերում է ցանկացած կազմակերպության (պետական, ՀԿ, զինվորական կամ կոմերցիոն հաստատություն), որը պատասխանատու է հակասկանային գործունեության նախագծերի կամ խնդիրների իրականացման համար: Հակասկանային գործունեության կազմակերպությունը կարող է լինել առաջնային **կապալառու**, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

### 3.162.

**Ականների մասին իրազեկում mine awareness**

(2004)

Տես Ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ):

**3.163.**

**Ականների մաքրում mine clearance**

Ականների և ՊՊՄ-ների վնասազերծումը **հատկորոշված գոտում** ըստ կանխորոշված չափորոշիչի:

**3.164.**

**Ականներ հայտնաբերող շներ (ԱՀՇ) Mine Detection Dog(s) (MDD)**

Շուն, որին վարժեցրել են և աշխատացնում են **ականներ, ՊՊՄ-ներ և այլ պայթուցիկ նյութեր** հայտնաբերելու համար:

**3.165.**

**Ականազերծ mine free**

(2004)

Տերմին, որը կիրառվում է այն տարածքի վերաբերյալ, որը հաստատվել է որպես հատկորոշված խորությամբ ականազերծված: Այն կիրառվում է նաև որևէ երկրի կամ գոտու վերաբերյալ, որը չի ունեցել ականների առկայության հետ կապված խնդիրներ:

**3.166.**

**Ականի պատահար mine incident**

**Ականների կամ ՊՊՄ** վտանգ պարունակող ականազերծման աշխատանքային տեղամասից հեռու տեղի ունեցած պատահար (տես **ականազերծման պատահար**):

**3.167.**

**Ականների վտանգ mine risk**

(2004)

Ականի կամ ՊՊՄ ոչ միտումնավոր **պայթեցման** արդյունքում մարդկանց, գույքին կամ շրջանա միջավայրին հասցվող ֆիզիկական վնասի հավանականությունը և ուժգնությունը: [Վերցվել է ISO ուղեցույց 51:1999(E)-ից]

**3.168.**

**Ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ) Mine Risk Education (MRE)**

(2005)

Գործողություններ, որոնք նպատակ ունեն նվազեցնել ականի կամ ՊՊՄ պայթեցման արդյունքում վնասվածքի վտանգը՝ մարդկանց իրազեկվածության աստիճանը բարձրացնելու և վարքագծային փոփոխություններ քարոզելու միջոցով, այդ թվում **հանրային տեղեկատվության տարածումը, իրազեկումը և ուսուցումը**, ինչպես նաև **հակաականային գործողություններում համայնքի հետ կապի ապահովումը**:

**3.169.**

**Ականների վտանգի կրճատում mine risk reduction**

(2004)

Այն գործողությունները, որոնք նվազեցնում են մարդկանց, գույքին կամ շրջանա միջավայրին հասցվող ֆիզիկական վնասի հավանականությունը և/կամ ուժգնությունը: [Վերցվել է ISO ուղեցույց 51:1999(E)-ից]: Ականների վտանգը կարող է նվազեցվել ֆիզիկական միջոցառումների արդյունքում, ինչպես օրինակ **ականազերծումը**, ցանկապատումը կամ նշագրումը կամ էլ **ԱՎԻ** միջոցով վարքագծային փոփոխության արդյունքում:

**3.170.**

**ականի նշան mine sign**

Նշան, որը դրվում է որպես **նշագրման համակարգի** մաս և նախատեսված է մարդկանց նախազգուշացնելու **ականների** առկայության մասին

**3.171.**

**ականապատված գոտի mined area**

գոտի, որը վտանգավոր է **ականների** առկայության կամ ենթադրյալ առկայության պատճառով [MBT]:

**3.172.**

**ականադաշտ minefield**

հողակտոր, որը ականներ է պարունակում, որոնք տեղադրվել են ըստ կամ առանց նախագծի/սխեմայի [AAP-6]:

**3.173.**

**մոնիտորինգ monitoring**

(2004)

*հակաականային գործունեության համատեքստում այս տերմինը վերաբերում է ..... թույլատրված դիտարկում, ստուգում կամ գնահատում աշխատակետերի, հարմարությունների, սարքավորումների, գործողությունների, գործընթացների, ընթացակարգերի և թղթաբանության ոլորտներում որակավորում ունեցող անձնակազմի կողմից՝ առանց պատասխանատվություն կրելու, թե ինչն է մոնիտորինգի ենթարկվում: Մոնիտորինգը սովորաբար իրականացվում է՝ ստուգելու համաձայնեցումը պարտավորությունների, ընթացակարգերի կամ չափորոշիչ փորձի հետ և հաճախ ներառում է արձանագրման և զեկուցման բաղադրիչները:*

*ԱՎԻ-ի համատեքստում այս տերմինը վերաբերում է ..... տեղի ունեցող երևույթների չափման կամ դիտարկման գործընթացին: Այն իր մեջ ներառում է.*

- a) Չափման առաջընթացը ներգործության իրականացման պլանի կապակցությամբ՝ ծրագրեր/նախագծեր/գործողություններ, ռազմավարություն, քաղաքականություն և առանձնահատուկ նպատակներ:
- b) Փոփոխության չափում որևէ պայմանի կամ կայմանների խմբի դեպքում կամ դրանց բացակայության դեպքում (օրինակ՝ երեխաների կամ կանանց իրավիճակի փոփոխություն կամ էլ փոփոխություն երկրի ավելի լայն մասշտաբի համատեքստում):

Նշում՝ Սահմանումը սկիզբ է առնում UNICEF-ի “Կանոնակարգի և ծրագրավորման ձեռնարկից”:

**3.174.**

**Մոնիտորինգ իրականացնող մարմին monitoring body**

Կազմակերպություն, որպես կանոն **ԱԳԱՄ-ի** բաղադրիչներից մեկը, որը պատասխանատու է մոնիտորինգի ազգային համակարգի կառավարման և իրականացման համար:

**3.175.**

**ԱՎԻ կազմակերպություն MRE organisation**

(2004)

Ցանկացած կազմակերպություն (պետական, հասարակական կամ քաղաքացիական հասարակության, ինչպես օրինակ կանանց միություն, երիտասարդական միություն, կարմիր խաչի և մահիկի միություններ), առևտրային հաստատություն և զինվորականներ (ներառյալ խաղաղապահ ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ նախագծերի և առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ: ՏԱՎԻ ենթամիավոր՝ տերմինը վերաբերում է կազմակերպության այն ստորաբաժանմանը, անկախ անվանումից, որը հավաստագրված է կատարելու նախատեսված մեկ կամ ավելի ԱՎԻ գործողություն, ինչպիսիք են հանրային իրազեկման նախագիծ, դպրոցական կրթական նախագծեր կամ ակննազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովման նախագծի գնահատում:

**3.176.**

**ԱՎԻ գործընկեր MRE partner**

(2004)

Ականներ ունեցող համայնքի ներսում մի հաստատություն կամ գործակալ, որը կարող է համագործակցել ԱՎԻ կազմակերպության հետ ԱՎԻ ծրագրերին աջակցելու, դրանք մշակելու և իրականացնելու ուղղությամբ:

**3.177.**

**Զինամթերք munition**

**Պայթուցիկ նյութերով**, վառելիքով, հրատեխնիկայով, մեկնարկող նյութերով կամ միջուկային, կենսաբանական կամ քիմիական նյութերով լցված ամբողջական սարք՝ ռազմական գործողություններում օգտագործելու նպատակով, ներառյալ **ականատումբերը**: [AAP-6]

Նշում՝ Սովորական օգտագործման ժամանակ 'զինամթերքներ' (հոգնակի) կարող են լինել զենքերը, փամփուշտները և սարքավորումները:

**3.178.**

**Ազգային մարմին national authority**

(2004)

**Զինապաշարների ոչնչացման գործողությունների համատեքստում**, տերմինը վերաբերում է ..... յուրաքանչյուր երկրի այն պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնք պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել զինապաշարների ոչնչացման գործողությունները:

**3.179.**

**Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)**

**National Mine Action Authority (NMAA)**

Ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություն(ներ)ը, **կազմակերպություն(ներ)ը** կամ հաստատություն(ներ)ը, որը(որոնք) պատասխանատու են **ականազերծման գործողությունների** կարգավորման, կառավարման և համակարգման համար:

Նշում՝ Հիմնականում Հակաականային գործողությունների ազգային կենտրոնը (**ՀԱԳԿ**) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից:

Նշում՝ Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ-ը կամ որևէ այլ ճանաչված միջազգային կազմակերպություն կարող է անհրաժեշտ և տեղին համարել ստանձնելու ԱԳԱՄ-ի պարտականությունների մի մասը կամ ամբողջությամբ և իրականացնելու գործառույթների մի մասը կամ ամբողջությամբ:

**3.180.**

**չեզոքացնել neutralise**

անվտանգության սարքերը փոխարինելու գործողություն, ինչպես օրինակ՝ մեխերի կամ ձողիկների տեղադրում **պայթուցիկի** մեջ՝ կանխելու համար **հրահանի** կամ բոցավառիչի գործարկումը

Նշում՝ Սա իրն ամբողջությամբ անվտանգ չի դարձնում, քանի որ անվտանգության սարքերի հեռացումը անմիջապես կակտիվացնի իրը (տես **զինաթափել**).

Նշում Ականը չեզոքացված է համարվում, երբ ապահովված է արտաքին միջոցներով, որոնք չեն կարող այրվել: Սակայն միևնույն է այն կարող է վտանգավոր լինել, դրա հետ աշխատելու համար [AAP-6]

**3.181.**

**Զրոցավառվող նյութեր non-sparking material**

(2004)

Նյութեր, որոնք կայծ չեն առաջացնում գործիքով, քարով և այլ առարկայով հարվածելու ժամանակ կամ երբ այն ինքն է հարվածով դիպչում կոշտ մակերեսի:

**3.182.**

**Գործնական վերլուծություն (ԳՎ) Operational Analysis (OA)**

**Գործնական հետազոտում operational research**

Հետազոտման մի ոլորտ, որը գիտականորեն հիմնավորված քանակական և որակական վերլուծություն է կիրառում՝ աջակցելով կառավարման որոշումներին:

**3.183.**

**Գործնական հետազոտում operational research**

Տես Գործնական վերլուծությունը (ԳՎ)

**3.184.**

**Փայտատաշեղատախտակ (ՃՇԻ) particle board**

Տախտակ, որը պատրաստված է ամուր միացված փայտի փոքր կտորներից:

**3.185.**

**մշտական նշագրման համակարգ permanent marking system**

**նշագրման համակարգ**, որի կիրառումն անժամկետ է և սովորաբար պահանջում է պահպանում (տես **ժամանակավոր նշագրման համակարգ**):

**3.186.**

**Անձնական պաշտպանիչ սարքավորումներ (ԱՊՍ) Personal Protective Equipment (PPE)**

Բոլոր սարքավորումները և հանդերձանքը, որոնք նախատեսված են պաշտպանություն ապահովելու համար և որոնք աշխատողները կրում են աշխատանքի ժամանակ՝ իրենց **անվտանգությունը** կամ **առողջությունը** մեկ կամ ավելի **ռիսկերից** պաշտպանելու նպատակով:

**3.187.**

**փորձարկում pilot test**

մեկնարկից առաջ տեղի ունեցող գործընթաց, որի ընթացքում հավաքագրվում են մեծ քանակությամբ տվյալներ՝ ապահովելու համար, որ հետազոտության բոլոր տարրերը, ինչպես օրինակ՝ թիմի տեղաբաշխումը, տվյալների հավաքագրումը, զեկուցումը և վարչարարությունը գործում են ըստ նախատեսվածի:

**3.188.**

**քաղաքականություն policy**

սահմանում է կազմակերպության նպատակներն ու խնդիրները և պարզորոշում է գործունեության կանոնները, չափորոշիչներն ու սկզբունքները, որոնք թելադրում են այն ուղին, որով կազմակերպությունը նպատակադրվում է հասնել այդ նպատակներին:

Նշում՝ քաղաքականությունը զարգանում է ի պատասխան ռազմավարական ուղղության և դաշտային փորձի: Իր հերթին այն ազդեցություն է գործում պլանների զարգացման ուղղու/ձևի վրա, և ինչպես են մոբիլիզացվում և կիրառվում ռեսուրսները: Քաղաքականությունը կարգադրող բնույթ ունի և ենթադրում է ենթարկում, կամ առնվազն հորդորվում է:

**3.189.**

**Հետմաքրման ստուգում post clearance inspection**

(2004)

**Մարդասիրական ականազերծման կոնտեքստում տերմինը վերաբերում է...մաքրված հողատարածքի** նմուշի չափմանը, հետազոտությանը, փորձարկմանը կամ մաքրման պահանջների հետ այլ կերպ համեմատմանը:

**3.190.**

**Դիզայնին հաջորդող ծառայություններ (ԴՀՕ) Post Design Services (PDS)**

Հետագա ծառայություններն օրինակ՝ **սարքավորումների** ընթացիկ մշակում և ձևափոխում, որոնք հաջորդում են սարքավորումների **ընդունմանը**:

Նշում՝ ԴՀՕ-ն կարող է գործածվել սկզբնական պայմանագրից հետո՝ սարքավորումները թարմացնելու նպատակով՝ ի պատասխան փոփոխվող հանգամանքներին և պահանջներին:

**3.191.**

**Նախնական մշակում (ՆՄ) Preliminary Development (PD)**

(2004)

Պլանավորման, դիզայնի և ինժեներական աշխատանքներ, որոնք անհրաժեշտ են՝ տեխնիկական անորոշության խնդիրները հետազոտելու համար, ինչպես նաև տևողության և ծախսերի մանրամասն հաշվարկն ապահովելու համար՝ նախքան անցում դեպի **Լիարժեք մշակման** փուլ որոշում ընդունելը:

Նշում՝ ՆՄ-ի ընթացքում համեմատաբար ճկուն հարաբերություններ պետք է ստեղծվեն տեխնիկական առանձնահատկությունների և գործնական պահանջների միջև:

**3.192.**

**Նախնական ուսումնասիրություն preliminary study**

Ուսումնասիրում, որը գաղափարի գործնականությունն է ցույց տալիս՝ տեխնոլոգիական հնարավորությունների և ծախսերի առումով:

**3.193.**

**նախափորձարկում pre-test**

հետազոտության մեկնարկից առաջ տեղի ունեցող գործողություն՝ հետազոտության ընտրված գործիքների հստակությունն ու համապատասխանությունը ստուգելու համար

**3.194.**

**կապսուլ primer**

ինքնապարփակ **զինատեսակ** որը տեղադրված է քարթրիջի կամ կրակող մեխանիզմի մեջ և գործարկող լիցքը բռնկելու միջոց է ապահովում

**3.195.**

**“հեղինակավոր կազմակերպություն” principal**

(2004)

Այն կառույցը, որը պայմանագիր է կնքում մեկ այլ կառույցի հետ՝ իրագործելու հակաականային գործունեության պահանջվող գործողությունը: Հեղինակավորը կարող են լինել դոնորը, ԱԳԱՄ-ը, ԱԳԱՄ-ի անունից գործող կազմակերպությունը, առևտրային կազմակերպություն կամ այլ կառույց, որը ցանկանում է հակաականային գործունեության իրականացումը և դրա իրականացման համար հակաականային գործունեության կազմակերպություն է ներգարվում:

**3.196.**

**Գնումներ procurement**

Հետազոտման, մշակման և արտադրության կամ գնման գործընթաց, որի արդյունքում **սարքավորումը** ճանաչվում է որպես օգտագործման համար հարմար և շարունակվում է պահեստամասերի և **հետ-արտադրական ծառայությունների** (Post Design Services, PDS) ապահովմամբ տվյալ սարքավորման գործածման ողջ ընթացքում:

**3.197.**

**ստուգազննում prodding**

**ականագրեման** ժամանակ կիրառվող ընթացակարգ, որով գրունտը ստուգվում է՝ ենթամակերեսային **ականների** և/կամ **ՊՊՄ-ների** առկայությունը պարզելու համար (տես **ականահատումներ**)։

**3.198.**

**Ծրագիր programme**

(2004)

նախագծերի կամ գործողությունների մի խումբ, որոնք համակարգված ձևով են կառավարվում՝ այնպիսի օգուտներ ապահովելու, որոնք հնարավոր չէին լինի, եթե այն նախագծերը և/կամ պայմանագրերն անկախ ձևով կառավարվեին։

**3.199.**

**նախագիծ project**

(2004)

մի նախաձեռնում/ջանք է, որում մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները կազմակերպված են՝ նախաձեռնելու աշխատանքի մի ուրույն ծավալ, տվյալ առանձնահատկությամբ, ծախսերի և ժամանակի սահամանափակումներով՝ հանգելու բարենպաստ փոփոխությունների, որոնք սահմանվել են քանակական և որակական նպատակներով։

**3.200.**

**նախագծի կառավարում project management**

(2004)

մի գործընթաց, որի միջոցով նախագիծը հասնում է հաջող եզրափակման։

**3.201.**

**առաջարկ proposal**

(2004)

մյուս կողմի համար քննարկման կամ ընդունման ենթակա հրավեր։

**3.202.**

**Պաշտպանիչ միջոց protective measure**

**Ռիսկը** կրճատելու նպատակով օգտագործվող միջոցներ [ISO ուղեցույց 51:1999(E)]

**3.203.**

**Արձանագիր V Protocol V**

(2007)

**ԿՈՋ** արձանագիր V **Պատերազմի Պայթուցիկ մնացորդների** վերաբերյալ։

Նշում՝ Արձանագիր V-ի շրջանակներում Պետական կուսակցություններից կամ զինված հակամարտության կողմերից պահանջվում է վնասագրեթե, հետացնել կամ վերացնել ՊՊՄ (Արտ. 3) և գրանցել, պահպանել և փոխանցել պայթուցիկ հրանոթների օգտագործման կամ լքման մասին տեղեկատվությունը (Արտ. 4)։ Նրանք պարտավոր են նաև ձեռնարկել բոլոր հնարավոր նախազգուշացումները՝ քաղաքացիական բնակչությանը (Արտ. 5) և մարդասիրական առաքելություններին ու կազմակերպություններին (Արտ. 6) պաշտպանելու նպատակով։ Սույն գործունեությունն իրականացնելու դիրքում գտնվող պետական մարմինները պետք է այլ աշխատանքների հետ համատեղ համագործակցեն և աջակցություն ցուցաբերեն նշագծման, մաքրման, հեռացման, վերացման և զոհերին աջակցություն ցուցաբերելու գործում (Արտ. 7 և 8)։ Արձանագիր V-ը ուժի մեջ է մտել 2006թ-ի նոյեմբերի 12-ին։

**3.204.**

**Նախատիպ prototype**

**Սարքավորում**, բաղադրիչ կամ ենթա-բաղադրիչ, որը կառուցվել է հնարավորինս մոտ վերջնական դիզայնին և ստեղծված չափորոշիչին:

Նշում՝ Նախատիպերն օգտագործվում են՝ աջակցելու վերջնական արտադրության չափորոշիչի մշակմանը և/կամ ցուցադրելու գործողության կամ առանձնահատկությունների համաձայնեցվածությունը:

**3.205.**

**շրջակայքի ստուգում proximity verification**

գործողություն՝ ստուգելու համայնքային հարցազրույցների ժամանակ հայտնված վտանգի գոտիների **ականները/ՊՊՄ-ները**

Նշում՝ Դիտարկումը պետք է արվի անվտանգ տարածքից և ըստ համապատասխան արձանագրությունների

**3.206.**

**Հանրային իրազեկում public education**

**Ականների և ՊՊՄ-ների վտանգների** մասին ընդհանուր իրազեկման բարձրացմանն ուղղված մի գործընթաց՝ հանրային տեղեկատվության, պաշտոնական և ոչ պաշտոնական կրթման համակարգերի միջոցով:

Նշում՝ հանրային իրազեկումը զանգվածային մոբիլիզացիայի մոտեցում է, որ ականների և ՊՊՄ-ների վտանգների մասին տեղեկություններ է տարածում: Այն կարող է պաշտոնական և ոչ պաշտոնական կրթման տեսք ունենալ և կարող է զանգվածային լրատվամիջոցների տեխնիկական օգտագործել:

Նշում՝ արտակարգ իրավիճակներում ժամանակային սահմանափակումների և առկա տվյալների սակավության պատճառով դա ամենագործնական ձևն է ապահովության տեղեկությունները փոխանցելու համար: Այլ իրավիճակներում այն կարող է աջակցել **համայնքների հետ փոխադարձ կապին**:

**3.207.**

**Հանրային տեղեկատվության տարածում public information dissemination**

(2004)

**Ականների կամ ՊՊՄ** մասին տեղեկություններ, որոնք օգտագործվում են ազգաբնակչությանն իրազեկելու կամ ունեցած տեղեկությունները թարմացնելու համար: Այն կարող է վերաբերել որոշակի հարցերի, ինչպես օրինակ ականների արգելման մասին օրենսդրության պահպանումը կամ կարող է օգտագործվել հակաականային գործողությունների ծրագրին հանրության կողմից ցուցաբերած օժանդակությունն ուժեղացնելու համար: Այսպիսի նախագծերը, սովորաբար, պարունակում են ռիսկի կրճատման մասին ուղերձներ, սակայն կարող են օգտագործվել նաև արտացոլելու համար հակաականային գործողությունների ազգային քաղաքականությունը:

**3.208.**

**Պարզ հետազոտություն pure research**

հետազոտման այնպիսի աշխատանքներ, որոնք կապված չեն որևէ առանձնահատուկ կիրառական ծրագրի հետ: Պարզ հետազոտության արդյունքը վերջ ի վերջո կարող է հանգեցնել որևէ ապրանքի, սակայն դրա անմիջական նպատակն է սահմանել բնորոշ/համընդհանուր սկզբունքներ:

**3.209.**

**Որակ quality**

Այն աստիճանը, որով սահմանված հատկանիշները բավարարում են առաջադրվող պահանջները [ISO 9000:2000]

**3.210.**

**Որակի ապահովում (ՈԱ) Quality Assurance (QA)**  
(2005)

ՈԿ մաս, որը վերաբերում է որակի պահանջների պահպանման վերաբերյալ վստահության ապահովմանը [ISO 9000:2000]

Նշում՝ **մարդասիրական ակնազերծման** համատեքստում ՈԱ նպատակն է հաստատել, որ ապահովման ակնազերծման փուլի կառավարումը և գործառնական ընթացակարգերը պատշաճ վիճակում են, կիրառվում են և կապահովեն սահմանված պահանջները անվտանգ, արդյունավետ և օպերատիվ ձևով: Պետք է կատարվի նաև ներքին ՈԱ՝ **ոչնչացնող կազմակերպության** և արտաքին ստուգազննումները՝ արտաքին **մոնիտորինգի մարմինների** կողմից:

**3.211.**

**Որակի հսկողություն (ՈՀ) Quality Control (QC)**

Որակի կառավարման մաս, որն ուղղված է որակի պահանջների կատարմանը [ISO 9000:2000]

Նշում՝ ՈՀ-ը ենթադրում է վերջնական պրոդուկտի ստուգազննում: **Մարդասիրական ակնազերծման** դեպքում “պրոդուկտը” անվտանգ և վնասազերծված հողերն են:

**3.212.**

**Որակի կառավարում (ՈԿ) Quality Management (QM)**

Համակարգում է գործողությունները՝ կազմակերպությանը որակի վերաբերյալ ուղղություններ տալու և **որակը** հսկելու նպատակով [ISO 9000:2000]:

**3.213.**

**պատահական ընտրանք random sampling**

**ընտրանքի** ընտրություն մի գործընթացի միջոցով, որը յուրաքանչյուր իրի ընտրության հավասար հնարավորություններ է ներառում: Օգտագործվում է որպես **փորձարկման** նպատակներով տարածքների անկողմնակալ ընտրության հնարավորություն:

**3.214.**

**ռաստրային տվյալներ raster data**

Երևակայական վանդակացանցի կիրառում՝ լանդշաֆտը ներկայացնելու համար: Կետային առանձնահատկությունները ներառված են որպես առանձին պունակային/տողային մուտքեր ցանցում: Գծերը հատկորոշված են որպես իրար միացված վանդակների համակցություն, իսկ տարածքներն առանձնանում են որպես մի պատկեր, որը կազմում են բոլոր վանդակները միասին:

**3.215.**

**RDX (1, 3, 5-տրիազացիկլոհեքսան) RDX (1, 3, 5-triazacyclohexane)**

(2005)

RDX մեկ այլ ռազմական պայթուցիկ նյութ է, որը լայնորեն օգտագործվում է որպես պայթուցիկ նյութ մեծ քանակությամբ զինամթերքների պատրաստման մեջ: RDX համեմատաբար քիչ զգայուն է, այն ունի քիմիական բարձր կայունություն, սակայն այն ավելի ցածր է, քան STS մոտ: RDX հետ չի կարելի աշխատել առանձին կամ չոր վիճակում՝ պատահական պայթյունների վտանգի պատճառով: Այն օգտագործվում է որպես պայթուցիկ խառնուրդների, մասնավորապես պլաստիկ պայթուցիկ նյութերի բաղադրիչ:

**3.216.**

**Խելամտորեն կանխատեսելի սխալ օգտագործում reasonably foreseeable misuse**

(2004)

Ապրանքի, գործընթացի կամ ծառայության օգտագործումն այնպիսի ձևով, որը չի նախատեսվել մատակարարի կողմից, բայց որը հնարավոր է տեղի ունենա՝ հեշտությամբ կանխատեսելի մարդկային վարվելակերպի պատճառով [ISO Guide 51:1999(E)]:

**3.217.**

**Ճանաչման ենթակա կտոր recognition piece**

(2004)

մետաղյա կտոր, որը տեղադրվում է փորձարկվող իրերի տակ՝ դրանք մետաղորսիչի կողմից ճանաչելի դարձնելու համար:

**3.218.**

**Կրճատված տարածք reduced area**

Տես՝ տարածքի կրճատում see **area reduction**

Տարածքի կրճատումից հետո մնացած **վտանգավոր տարածք**: Այն շարունակվում է դիտարկվել որպես **վտանգավոր տարածք**:

**3.219.**

**Կողմնորոշիչ ուղենիշ reference point**

Ցամաքային ուղենիշ landmark

**Վտանգավոր տարածքից դուրս** որոշ հեռավորության վրա տեղադրվող ամրակցված նշանով: Այն պետք է լինի հեշտությամբ ճանաչվող և մշտական օգտագործման նշան (ինչպես օրինակ խաչմերուկներ, կամրջը կամարակալ), որոնք կարող են օգտագործվել մեկ կամ ավել **նշագրերի** տեղափոխվելու համար:

Նշում՝ Միջազգային պրակտիկայում դրանք հաճախ կոչվում են նաև գեոդոզիական կետեր և վերաբերում են նախահետազոտված տարածքներին, ինչպես օրինակ արգելակետը:

**3.220.**

**Տվյալների շտեմարանի հարաբերակցական կառավարման համակարգ (RDMS)**

**Relational Database Management System (RDMS)**

ի տարբերություն յուրաքանչյուր մուտքագրված գրառման համար տարբեր դաշտեր պարունակող մեկ աղյուսակի՝ RDMS-ը կիրառում է նույնականացման ծածկագրեր՝ բազմաթիվ աղյուսակներ միմյանց կապելու համար: Օգտագործվող ծածկագրերը հարաբերակցություն են հաստատում տվյալների աղյուսակների միջև: RDMS-ը շատ արդյունավետ է մեծ քանակությամբ տվյալների կառավարման համար և թույլ է տալիս մանրամասն հարցումներ կատարել՝ կուտակված տվյալների միջև հարաբերությունը այլ գրառումների նկատմամբ հաստատելու համար:

**3.221.**

**Վստահելիություն reliability**

**Մարքավորման**, բաղադրիչի կամ ենթաբաղադրիչի ունակությունը կատարել պահանջվող ստույգ գործառույթ՝ հատկանշված պայմաններում և ստույգ սահմանված ժամանակահատվածում:

**3.222.**

**Վստահելի (ականազերծման գործողության) տեղեկատվություն reliable (mine action)**

**information**

(2004)

**ականազերծման** գործողություն իրականացնելու համար **ԱԳԱՄ** կողմից ընդունելի և վստահելի համարվող տեղեկատվություն:

**3.223.**

**Անվտանգ դարձնելու գործընթացներ (ԱՌԳ) Render Safe Procedure (RSP)**

Հատուկ ԱՌԳ մեթոդների և միջոցների կիրառումը՝ ֆունկցիաների ընդհատումը կամ անհրաժեշտ բաղադրամասերի առանձնացումն ապահովելու համար՝ անցանկալի պայթյունը կանխելու համար:

**3.224.**

**Հետազոտում research**

Համակարգված հարցում, քննում և փորձարկում experimentation՝ փաստեր և սկզբունքներ սահմանելու նպատակով:

**3.225.**

**Մնացորդային ռիսկ residual risk**

*Մարդասիրական ակննազերծման համատեքստում, տերմինը վերաբերում է ..... այն ռիսկին, որը դեռևս պահպանվում է նշագրված տարածքում, սահմանված խորությամբ ակննները և ՉԶ-ները գտնելուց և վնասազերծելուց հետո:* [փոփոխությունները ՄՉԿ Ուղեցույց 51:1999]

**3.226.**

**Ռիսկ risk**

**Վնասի** հավանականության և դրա ուժգնության համադրությունը: [ISO ուղեցույց 51:1999(E)]

**3.227.**

**Ռիսկի վերլուծություն risk analysis**

Առկա տեղեկատվության համակարգված օգտագործում՝ վտանգները հայտնաբերելու և ռիսկը գնահատելու նպատակով [ISO Guide 51:1999(E)]:

**3.228.**

**Ռիսկի որակում risk assessment**

ընդհանուր գործընթաց, որը բաղկացած է ռիսկի վերլուծությունից և ռիսկի որակումից [ISO Guide 51:1999(E)]:

**3.229.**

**Ռիսկի գնահատում risk evaluation**

գործընթաց, որի հիմքում ռիսկի վերլուծություն է առ այն, արդյոք հասանելի է դարձել հանդուրժելի/տանելի ռիսկը [ISO Guide 51:1999(E)]:

**3.230.**

**Ռիսկի նվազեցում risk reduction**

գործողություններ, որոնք կատարվում են նվազեցնելու կոնկրետ **ռիսկի** հավանականությունը կամ դրա հետ կապված բացասական հետևանքները կամ երկուսը միասին:

**3.231.**

**Ապահով safe**

ռիսկի բացակայություն: Սովորաբար առավել պատշաճ և ընդունելի է **‘տանելի ռիսկ’** տերմինը:

**3.232.**

**ապահովություն safety**

ռիսկի նվազեցում հանդուրժելի աստիճանի [ISO Guide 51:1999(E)]:

**3.233.**

**Նմուշ sample**

*Մարդասիրական ականազերծման կոնտեքստում տերմինը վերաբերում է... հողատարածքի վրայից պատահականորեն ընտրված 1.0մ<sup>2</sup> մակերեսով մեկ կամ մի քանի հողակտորներին:*

**3.234.**

**Նմուշի չափ sample size**

*Մարդասիրական ականազերծման կոնտեքստում տերմինը վերաբերում է...նմուշի մեջ 1.0մ<sup>2</sup> մակերեսով հողակտորների քանակին:*

**3.235.**

**փորձանմուշ վերցնելը sampling**

*մարդասիրական ականազերծման համատեքստում տերմինը վերաբերում է..... սահմանված ընթացակարգի, որով մաքրված տարածքի մի մասը կամ մասերը՝ որպես ամբողջ տարածքը ներկայացնող կտոր, վերցվում են ստուգման համար:*

**3.236.**

**Նմուշների փորձարկման նախագիծ sampling plan**

*Մարդասիրական ականազերծման կոնտեքստում տերմինը վերաբերում է... հստակ նախագծին, որը ներկայացնում է յուրաքանչյուր հողատարածքից ստուգման ենթակա 1.0մ<sup>2</sup> մակերեսով հողակտորների քանակը (նմուշի չափը կամ նմուշների չափերի շարքը) և հողատարածքի ընդունելի լիենելու փաստը սահմանող համապատասխան չափանիշները (ընդունման և մերժման թվերը):*

**3.237.**

**ականատումներ sapping**

*մարդասիրական ականազերծման համատեքստում տերմինը վերաբերում է ..... ականազերծման ընթացքում կիրառվող ընթացակարգի, երբ այլ ընթացակարգերի հետ համատեղ հողը մաքրվում է անվտանգ մեկնարկային կետից սկսած՝ հողը փորելով և շարժվելով դեպի առաջ:*

**3.238.**

**Հոտ scent**

Յուրահատուկ բույր:

**3.239.**

**Երկրորդային բեկորատվածք secondary fragmentation**

բեկորատվածք պայթեցման միջոցառման ժամանակ, որն ի սկզբանե ականի/ՊՊՄ-ի մասը չէր կազմում

**3.240.**

**Ինքնաչեզոքացում self-neutralisation**

ականի մաս կազմող սարքի միջոցով իրականացվող գործողություն, որը ականը դարձնում է չաշխատող, բայց ոչ միանշանակ անվտանգ դրա հետ աշխատելու համար: Ցամաքային ականների դեպքում կարող է լինել հակառակ գործընթացը [AAP-6]

**3.241.**

**սահմանված տարածք specified area**

*մարդասիրական ականազերծման համատեքստում տերմինը վերաբերում է ..... այն տարածքին, որի համար պայմանագիր կամ համաձայնագիր է կնքվել իրականացնելու ականներից կամ ՊՊմ-ներից մաքրման գործողությունը, ԱԳԱՄ-ի կամ նրա անունից գործող կազմակերպության կողմից սահմանված կարգով:*

**3.242.**

**սահմանված խորություն specified depth**

*մարդասիրական ականագերծման համատեքստում տերմինը վերաբերում է ... սահմանված տարածքի* այն խորությանը, որի համար պայմանագիր կամ համաձայնագիր է կնքվել իրականացնելու ականներից կամ **ՊՊՄ-ներից** մաքրման գործողությունը, **ԱԳԱՄ**-ի կամ նրա անունից գործող **կազմակերպության** կողմից սահմանված կարգով:

**3.243.**

**Որակի որոշված սահման (ՈՈՍ) Specified Quality Limit (SQL)**

*Մարդասիրական ականագերծման կոնտեքստում տերմինը վերաբերում է... վնասագերծման* գործողություններից ակնկալվող **որակի** հստակեցում:

Նշում՝ նմուշների փորձարկման ընդունման նպատակով ՈՈՍ հանդիսանում է հստակեցված սահմանագիծ այն ամենի միջև, ինչը կարող է իրատեսական համարվել որպես գործընթացի միջին, և ինչը չի կարող: Այն պետք է հասանելի լինի արտադրողի (ականագերծող կազմակերպության) համար, սակայն տանելի սպառողի (ԱԳԱՄ կամ պայմանագիր շնորհող գործակալության) համար:

Նշում՝ ՈՈՍ արտացոլում է միջին աղտոտումը (կապված մեկ քառակուսի մետրի վրա անհամապատասխանություն առաջացնող իրերի հետ), որին հետևում են երկար և կայուն մաքրման գործողություններ: Հավելված Գ-ում բերված աղյուսակը կազմվել է մաքրված տարածքի համար անվանական ՈՈՍ ընդունելով 0.35%:

**3.244.**

**Հովանավոր sponsor**

**Մարքավորումների փորձաշրջանի** հովանավորն այն հաստատությունն է, որը պահանջում է փորձաշրջանի իրագործումը:

Նշում՝ Ամենայն հավանականությամբ սա կլինի միջազգային կազմակերպություն, ազգային **ՀԱԿ, դոնոր կամ ականագերծող կազմակերպություն:**

**3.245.**

**Չափորոշիչ standard**

Չափորոշիչը փաստագրված համաձայնագիր է, որը պարունակում է տեխնիկական մանրամասնություններ կամ այլ ճշգրիտ չափանիշներ, որոնք համաձայնեցված կարգով օգտագործվելու են որպես կանոններ, ուղեցույցեր կամ առանձնահատկությունների սահմանումներ՝ ապահովելու, որ նյութերը, ապրանքները, գործընթացներն ու ծառայությունները համապատասխանում են իրենց նպատակին:

Նշում՝ հակաականային գործունեության չափորոշիչները նպատակ ունեն բարելավելու հակաականային գործունեության անվտանգությունն ու արդյունավետությունը՝ խթանելով նախընտրած ընթացակարգերը և փորձը թե գլխամասային գրասենյակում, և թե դաշտային/գործնական աշխատանքներում: Արդյունավետ լինելու համար չափորոշիչները պետք է լինեն բնորոշման և չափման ենթակա, հասանելի և վերահսկելի:

**3.246.**

**Գործառնությունների ստանդարտ ընթացակարգեր (ՉՍԸ) Standard Operating Procedures (SOPs)**

**Գործող գործառնական կարգ (ԳԳԿ) Standing Operating Procedures (SOPs)**

Հրահանգներ, որոնք սահմանում են գործառնական առաջադրանքը կամ գործողությունն իրականացնելու նախընտրած կամ գործող եղանակը:

Նշում՝ Նպատակն է ուժեղացնել կազմակերպության ներսում միասնականության, միօրինակության և ընդհանրության ընդունված և չափելի աստիճանները, նպատակ ունենալով բարելավել գործառնությունների արդյունավետությունը և անվտանգությունը: ԳՄԿ-երը պետք է արտացոլեն տեղական պահանջները և հանգամանքները:

**3.247.**

**չափորոշիչներ**

պահանջներ, մասնագրեր կամ մանրամասն այլ չափանիշներ, որոնք հետևողականորեն պետք է օգտագործվեն՝ ապահովելու, որ նյութերը, ապրանքները, գործընթացները և ծառայությունները համապատասխանում են իրենց նպատակին:

Նշում՝ **Հակասականային** չափորոշիչների նպատակն է բարձրացնել ականագերծման գործողությունների անվտանգությունն ու արդյունավետությունը՝ խթանելով նախընտրելի ընթացակարգերն ու գործելաոճերը ինչպես գլխամասային, այնպես էլ դաշտային մակարդակով:

**3.248.**

**Գործող գործառնական կարգ (ԳԳԿ) Standing Operating Procedures (SOPs)**

Տես **Գործառնությունների ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ) Standard Operating Procedures (SOPs):**

**3.249.**

**Գործնական կարիքների հայտարարություն (ԳԿՇ) Statement of Operational Need (SON)**

(2004)

Մի փաստաթուղթ, որը նկարագրում է **օգտագործողի** գործնական կարիքները:

Նշում՝ ԳԿՇ-ն պետք է մշակվի օգտագործողի կողմից, ով սահմանել է կարիքը, կամ էլ **հովանավորի** կողմից, ով գործում է օգտագործողի անունից:

**3.250.**

**Պահանջների հայտարարություն (ՊՀ) Statement of Requirement (SOR)**

Մի փաստաթուղթ է, որը մանրամասն ձևակերպում է ապահովում սարքավորումներից ակնկալվող առանձնահատկությունների և գործողության վերաբերյալ՝ հիմքում ունենալով նախընտրած լուծումը:

**3.251.**

**Առաջադրանքների և արդյունքների հայտարարություն (ԱԱՀ) Statement of Tasks and Outputs (STO)**

Մի փաստաթուղթ է, որը լայն շրջանակով է ձևակերպում **օգտագործողի** կարիքները՝ նշելով սարքավորումների առաջադրանքները և դրանց կարևոր առանձնահատկությունները՝ շեշտը դնելով առավելապես այն արդյունքի վրա, որը պահանջվում է, քան թե դրան հասնելու ձևերի վրա, որպեսզի ապահովվի այլընտրանքային լուծումների ամբողջական նկատառումը:

**3.252.**

**Պողպատ steel**

(2004)

Ընդհանուր նպատակով արտադրված (տաք կամ սառը գլանման) ցածր-ածխածին պարունակով մետաղ, ինչպես օրինակ ASTM (նյութերի փորձարկման ամերիկյան միության կողմից հաստատված) A366b կամ համարժեք:

**3.253.**

**կուտակված պաշարներ stockpile**

*մարդասիրական ականագերծման համատեքստում տերմինը վերաբերում է ..... կուտակված ՊԶ-ի մեծ պաշարին*

**3.254.**

**կուտակված պաշարների վնասագերծում stockpile destruction**

վնասագերծման ֆիզիկական ընթացակարգ՝ ուղղված ազգային մակարդակով **կուտակված պաշարների** շարունակական կրճատմանը:

**3.255.**

**Էնթառագմամթերք submunition**

**ռագմամթերք**, որը մայր ռագմամթերքից անջատվում է՝ իր աշխատանքը կատարելու համար

**ականներ** կամ ռագմամթերք, որ կազմում է հրետանային փամփուշտի կամ հրթիռային ականի պայթյունի ուժգնության մասը

**3.256.**

**Հետազոտման նշագիր survey marker**

(2004)

Ամուր և դիմացկուն նշագիր, որն օգտագործվում է **ականազերծման** գործողությունների ժամանակ **նշագրված** և **ականազերծված տարածքների** պահպանմանն օժանդակելու նպատակով:

**3.257.**

(2004)

**Փրկվածներ (ական/ՊՊՄ) survivor (landmine/ERW)**

Անձինք, ովքեր կամ անհատապես կամ հավաքական կերպով կրել են ֆիզիկական, հուզական կամ հոգեբանական վնաս, տնտեսական կորուստ կամ ում հիմնարար իրավունքները զգալիորեն տուժել են ականների կամ ՊՊՄ-ի առկայության հետ կապված գործողությունների կամ սխալների արդյունքում: Ականների/ՊՊՄ փրկվածների թվում են անմիջականորեն վնաս կրած անձինք, նրանց ընտանիքները կամ ականներ/ՊՊՄ պատված տարածքներ ունեցող համայնքները:

**3.258.**

**Աջակցություն փրկվածներին survivor assistance**

Տես **աջակցություն տուժածներին**

**3.259.**

**Կասկածյալ վտանգավոր տարածք (ԿՎՏ) Suspected Hazardous Area (SHA)**

Տես **վտանգավոր տարածք**

(2006)

**3.260.**

**Հանձնարարության տարբերահամար (ID) task identification number (ID)**

**Վտանգավոր տարածքը** մատնանշելու համար կիրառվում են տարբերակիչ համարներ: Հանձնարարության տարբերակիչ համարները տրամադրվում են **ԱԳԱՄ-ի** կողմից:

**3.261.**

**Տեխ. ուսումնասիրություն technical survey**

(2004)

Նախկինում սրա մասին խոսվում էր որպես 2-րդ մակարդակի ուսումնասիրություն Պլանավորման փուլում հայտնաբերված հայտնի կամ ենթադրվող **ականապատված տարածքների** մանրամասն տոպոգրաֆիկ և տեխնիկական ուսումնասիրությունն է: Նման տարածքներ կբնորոշվեն յուրաքանչյուր տեղեկությունների հավաքման կամ ուսումնասիրությունների ընթացքում, որոնք կազմում են **ՀԱԳԸԳ գործընթացի** մաս:

**3.262.**

**նշագրման ժամանակավոր համակարգ temporary marking system**

նշագրման համակարգ, որն ունի օգտագործման կոնկրետ սահմանված ժամանակ (տես **մշտական նշագրման համակարգ**):

**3.263.**

**տենդեր tender**

(2004)

այլ կողմին առանց նախապայմանների պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու հրավեր ներկայացնել:

**3.264.**

**տենդերի գործընթաց tender process**

(2004)

տենդերների հրավերի և գնահատման գործընթաց՝ նախընտրելի կապալառու ընտրելու համար:

**3.265.**

**Փորձարկում test**

Մեկ կամ ավելի առանձնահատկությունների պարզորոշում՝ համաձայն ընթացակարգի [ISO 9000:2000]:

**3.266.**

**Փորձարկում և գնահատում (ՓևԳ) Test and Evaluation (T&E)**

Աշխատանքներ, որոնք առնչվում են ապարատային ապահովման և ծրագրային ապահովման փորձարկմանը:

Նշում՝ Աշխատանքները ներառում են ընթացակարգերի և չափորոշիչների ձևավորումն ու կիրառումը, տվյալների նվազեցումն ու մշակումը, **փորձարկման** արդյունքների ու մշակված տվյալների գնահատումն ու գնահատականն ըստ չափանիշների, օրինակ՝ սահմանված **չափորոշիչներ** և առանձնահատկություններ:

**3.267.**

**Փորձարկման տեղամաս test site**

(2005)

Տեղամաս, որում մի շարք փորձարկման դաշտեր կամ ուղիներ նախապատրաստված են ԱՀԾ գործառնական փորձարկման նպատակներով:

**3.268.**

**Գողությունից պաշտպանված theft resistant**

(2004)

Կառույց, որը նախատեսված է պայթուցիկների պահեստ անօրինական մուտքն արգելելու և/կամ ուշացնելու նպատակով:

**3.269.**

**ՏՆՏ (2, 4, 6 Տրինիտրոտոլուոլ/տրոտիլ) TNT (2, 4, 6 Trinitrotoluene)**

Առավել լայն տարածում ունեցող ռազմական պայթուցիչ: ՏՆՏ չափազանց կայուն է, ոչ հիգրոսկոպիկ և համեմատաբար ոչ զգայուն արտաքին ազդեցությունների, շփման, շոկի և էլեկտրոստատիկ էներգիայի նկատմամբ: ՏՆՏ առավել լայնորեն տարածված պայթուցիկ նյութի տեսակ է, որն օգտագործվում է ականներում և զինամթերքներում:

**3.270.**

**Հանդուրժելի/տանելի ռիսկ tolerable risk**

Ռիսկ, որն ընդունելի է տվյալ իրավիճակում՝ ելնելով հասարակության ներկայիս արժեքներից: [ISO Guide 51:1999(E)]

**3.271.**

**Փորձաշրջան trial**

Համակարգված ձևով կազմակերպված **փորձարկումների** մի շարք, որոնց առանձին արդյունքները հանգեցնում են բաղադրիչի, **սարքավորման** կամ համակարգի ընդհանուր գնահատականին:

**3.272.**

**Շրջադարձ turning point**

(2004)

Գետնին ամրակցված կետ, որը ցույց է տալիս **վտանգավոր տարածքի** շրջագծի ուղղության փոփոխություն: Այն պետք է հստակորեն նշագվի և գրանցվի: Հողում թաղված մոտադական առարկաները պետք է օգտագործվեն բոլոր շրջադարձերը նշագրելու համար՝ հետագայում մշտական դրանցից տեղեկանալու նպատակով:

**3.273.**

**Չպայթած զինամթերք (ՉՁ) Unexploded Ordnance (UXO)**

Պայթուցիկ զինամթերք, որը լիցքավորվել է, ձուլվել/հազեցվել պայթացիչով, զինվել կամ որևէ այլ կերպ նախապատրաստվել օգտագործման համար կամ օգտագործվել: Այն կարող է լինել հրանետված, ցած զցված, տեղադրված կամ նախատեսված, սակայն դեռևս չպայթեցված՝ ձախողման պատճառով, շահագործման կառուցվածքից ելնելով կամ էլ որևէ այլ պատճառով:

**3.274.**

**միավորի արժեք unit rate**

(2004)

այն արժեքները, որի շուրջ համաձայնության են եկել և ընդունել են՝ պայմանագրում շարադրված հատկորոշված զին ունեցող գործողությունների և քանակի վերաբերյալ:

**3.275.**

**ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՄ) United Nations Mine Action Service (UNMAS)**

(2004)

ՄԱԿ-ի կազմում կարևոր մի հանգույց՝ ականների հետ կապված բոլոր գործողությունների համար:

Նշում՝ ՄԱԿԱՄ-ը ՄԱԿ-ի քարտուղարության կառուցվածքային միավոր է, որը պատասխանատու է միջազգային համայնքի կողմից կիրառելու նպատակով **ՀԱԳՄՉ** մշակման և պահպանման համար:

Նշում՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը **ԱՎԻ-ի** հիմնական մարմինն է և ենթակա է ՄԱԿԱՄ-ի ընդհանուր համակարգմանը:

**3.276.**

**Օգտագործող user**

Անհատ կամ կազմակերպություն, ով կշահագործի սարքավորումը:

Նշում՝ **Հակաականային գործունեության** նպատակով “օգտագործողը” կարող է նաև բնորոշվել որպես “ազգային, առևտրային և ՀԿ օգտագործողների կարիքների վերաբերյալ տեղեկացված և հեղինակավոր կարծիքներ ունեցող համակցված մի մարմին՝ այսօր և ապագայում”:

**3.277.**

**Հաստատում validation**

Օրինականացման/ռատիֆիկացիայի ակտ/գործողություն, որը տեղի է ունենում ստուգման գործընթացից հետո:

**3.278.**

**վեկտորային տվյալներ vector data**

X, Y կորդինատների կիրառում՝ լանդշաֆտի երեք հիմնական առանձնահատկությունները՝ կետը, գիծը և տարածքները, գտնելու համար

Նշում՝ Գետերը (քաղաքներ, միջադեպերի վայրեր և այլն) ներկայացվում են X, Y կորդինատների եզակի զույգի միջոցով: Գծերը (ճանապարհներ, գետեր և այլն) ներկայացվում են հերթականությամբ միմյանց միացված X, Y կորդինատային կետերի շարքի միջոցով: Տարածքները կամ պոլիգոնները (լճեր, սահմաններ և այլն) ներկայացվում են X, Y կորդինատային խմբի միջոցով, որոնք միմյանց միանալով փակ շղթա են կազմում՝ առանձնացնելով ներսի տարածքը:

**3.279.**

**Ստուգում verification**

Օբյեկտիվ վկայության տրամադրման միջոցով հաստատում առ այն, որ սահմանված պահանջներն իրականացվել են [ISO 9000:2000]:

**3.280.**

**Տուժած victim**

(2004)

Անձ, ով վնաս է կրել **ականի կամ ՊՊՄ վթարի/դժբախտ պատահարի** արդյունքում:

Նշում՝ **Տուժածներին ցուցաբերվող օգնության** առումով, տուժած տերմինը կարող է ներառել ականի/ՊՊՄ պատահարից կախյալներին, ուստի ավելի լայն հաստացություն է, քան փրկվածը:

**3.281.**

**Աջակցություն տուժածներին victim assistance**

**Աջակցություն փրկվածներին survivor assistance**

(2004)

Վերաբերում է օգնության, աջակցության, հոգատարության և ճժանդակության այն ողջ ծավալին, որը տրամադրվում է տուժածներին (այդ թվում նաև փրկվածներին)՝ նպատակ ունենալով նվազեցնելու անմիջական և երկարատև բժշկական ու հոգեբանական հետևանքները ստացած տրավմաներից հետո:

**3.282.**

**Գյուղի կողմից ականազերծում village demining**

(2004)

**Ականապատված/ՊՊՄ** ունեցող տարածքների ինքնուրույն ականազերծում և **վտանգավոր տարածքների** նշագրում, որը սովորաբար արվում է տեղի բնակիչների կողմից, ովքեր գործում են սեփական անձի կամ իրենց համայնքի անունից: Հաճախ նկարագրվում է որպես *ինքնուրույն ստանձնված նախաձեռնություն կամ տարերայնորեն իրականացվող ականազերծում*: Գյուղի կողմից ականազերծումը սովորաբար կատարվում է պաշտոնական համաակնային գործողություններ իրականացնող այնպիսի կառույցներից /գործողություններից անջատ կամ դրանց զուգահեռ, ինչպիսիք են զինվորականների կողմից կատարվող ականազերծումը, կամ ՄԱԿ-ի, միջազգային կամ տեղական ԿՀ-երի, մասնավոր ձեռնարկությունների, պետության կամ այլոց կողմից օժանդակվող մարդասիրական ականազերծումը:

**3.283.**

**Այցելու visitor**

(2004)

ՀԱԳՄՉ-երի նպատակներից ելնելով՝ անձ, որը ոչ **ականազերծման կազմակերպության** անդամ է, և ոչ էլ **ԱԳԱՄ-ի** կողմից հավաստագրված **ականազերծման աշխատակից**:

Նշում՝ այն դեպքերում, երբ ԱԳԱՄ-ը չունի **հավաստագրման** համակարգ, ականագերծման կազմակերպությունը պետք է պարզորոշի աշխատակից չհանդիսացող անդամների կարգավիճակը:

**3.284.**

**սպիտակ ֆոսֆոր White Phosphorous (WP)**

(2004)

ծուխը բացահայտող քիմիական նյութ, որը օդի հետ շփվելիս այրվում է (անձնակազմի վրա ունենալով լուրջ հետևանքներ, եթե մարդիկ ուղղակի շփում են ունենում ֆոսֆորի հետ)

**3.285.**

**աշխատավայր workplace**

բոլոր այն վայրերի վրա, որոնք գտնվում են գործատուի ուղղակի կամ անուղղակի վերահսկողության ներքո և որտեղ իրենց աշխատանքի բերումով պետք է լինեն կամ գնան աշխատողները [ILO R164]

## Փոփոխությունների գրանցում

### ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ անգամ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական նկատառումներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են, և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ, և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցում՝ մինչև նոր վերանայման իրականացումը:

ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխություններն այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org):

Թիվը	Ամսաթիվը	Փոփոխությունների մանրամասները
1	1 դեկտեմբերի 2004թ.	<p>1. Ֆորմատի փոփոխություններ:</p> <p>2. Տեքստի չնչին խմբագրական փոփոխություններ:</p> <p>3. Նշանակալի փոփոխություններ:</p> <p>a) <b>Նոր սահմանումներ</b>՝ Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊՁ); Համաձայնագիր; օդի փորձանմուշ վերցնելու մեթոդ; Առողիտ/ստուգում; Ռումբի կենդանի միավոր (BLU); բուֆերային գոտի; ՄԱՀ (ՄԵՀ աշխատախմբի համաձայնագրեր); Պայմանագիր; կապալառու; “հավելյալ ծախսերով” պայմանագիր; Ականազերծող; ականազերծման տարածք; Ոչնչացնող կազմակերպություն; Ճկունություն; Կրթում; Ճառագայթում; համաճարակային հիվանդություն; ֆիլտրային տուփ; ֆիլտրային քարթիջ; ֆիլտրային տարրա; “ստույգ գնով” պայմանագիր; Ճկուն խողովակ; “Ֆորս մաժոր”; Հողի նախապատրաստում; գրունտի մշակում; վնասաբեր միջոցառում; Վտանգավոր իրավիճակ; պատմական ստուգում; IATA; i/m; i/v; ազդեցությունից զերծ; Ստուգագննուտ; Ականների ազդեցության հետազոտում (ԱԱՀ); համաձայնության նամակ; մեխանիկական կիրառում; Հակաականային գործողությունների համակարգման կենտրոն (ՀԱԳՀԿ); Հակաականային գործունեության կազմակերպություն; Ականների մասին իրազեկում; Ականազերծ; Ականների վտանգ; Ականների վտանգի կրճատում; ականներից ապահով; Ականների սպառնալիքի աստիճան (ԱՄԱ); ԱՎԻ կազմակերպություն; ԱՎԻ գործընկեր; Ազգային մարմին; դրական, բացասական և դատարկ ֆիլտրեր, Հետմաքրման ստուգում; կանխարգելիչ պահպանում; “հեղինակավոր կազմակերպություն”; Ծրագիր; նախագիծ; նախագծի կառավարում; առաջարկ; Հանրային տեղեկատվության տարածում; quarantine; Խելամտորեն կանխատեսելի սխալ օգտագործում; ճանաչման ենթակա կտոր; Վստահելի (ականազերծման գործողության) տեղեկատվություն; s/c; Պողպատ; target substance; տենդեր; տենդերի գործընթաց; Փորձարկման տեղամաս; Գողերից պաշտպանված; toughness (tensile); միավորի արժեք; Գյուղի կողմից ականազերծում; Այցելու; եղանակից չվախեցող; սպիտակ ֆոսֆոր (WP). (72 սահմանում):</p> <p>b) <b>Հեռացված սահմանումներ</b>՝ փորձագիտական կարծիք, մեխանիկորեն իրականացվող մաքրում; հանրային տեղեկություններ:</p> <p>c) <b>Փոփոխված սահմանումներ</b>՝ Հավաստագրում; Տարածքի կրճատում; Նիվելիրային նշագիր; դաշտ; Ճեպագրույցի տարածք; Այրման վայր; Ռիսկը ժխտված տարածք (միայն նշումը); Մաքրված տարածք (միայն նշումը); Համայնքի հետ կապի ապահովում (և նշումը); վերահսկման տարածք կամ կետ; Կրիտիկական անհամապատասխանություն; Ապառազմականացում (միայն նշումը);</p>

		<p>Ականազերծող; Ականազերծող ստորաբաժանում; Ոչնչացման վայր; Ոչնչացում; Հայտնաբերում; Զինամթերքից ազատման վայր; drill; Հակասկանային գործունեության ընդհանուր գնահատում (ՀԱԳԸԳ, GMAA) (և նշումը); առողջություն; Ստուգագնում; ՀԱՏԿՀ/IMSMA (միայն նշումը); միջադեպ (միայն հղումային փոփոխություն); Իներտ; Միջանկյալ կետ; լիցենզիա; Կազմակերպչական հարցերը; Զինապահեստ; հակասկանային գործունեություն; Ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ, MRE); մոնիտորինգ; Զրոցավառվող նյութեր; Նախնական մշակում (ՆՄ, PD) (միայն նշումը); Որակի ապահովում (ՈԱ, ՉԱ); Գործնական կարիքների հայտարարություն (ԳԿՀ, SON); Հետազոտման նշագիր; Փրկվածներ (ական/ՊՊՄ); Տեխ. ուսումնասիրություն; threat; Շրջադարձ; ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՕ, UNMAS) (միայն նշումը); օգտագործելի տարածք (միայն նշումը); Տուժած; Աջակցություն տուժածներին:</p>
2	23 հուլիսի 2005թ.	<p>1. Բաժին 1՝ ծավալի փոփոխություն: 2. Բաժին 2՝ նոր ո) ենթաբաժին: 3. <u>Նոր սահմանումներ</u>՝ Մարտական գործողությունների տարածքի մաքրում (BAC); Եվրոպական նորմալիզացում (EN); Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ): (3 սահմանում). 4. <u>Հեռացված սահմանումներ</u>՝ օդի փորձանմուշի վերցնելը; բուֆերային գոտի; ճկունություն, ճառագայթում, համաճարակային հիվանդություն, ֆիլտրային տուփ, ֆիլտրի քարթրիջ, ֆիլտրի տարրա, ճկուն խողովակ, պատմական ստուգում, i/m; i/v; I.A.T.A; ականներից ապահով; ականների սպառնալիքի աստիճան, կազմակերպիչ, դրական, բացասական և դատարկ ֆիլտրեր, կանխարգելիչ պահպանում, թիրախ պաշարներ, եղանակ, եղանակից չվախեցող, ոչ ցանկալի հոտ, օգտագործելի տարածք (25 սահմանում). 5. <u>Փոփոխված սահմանումներ</u>՝ Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ); ընդունում; տուփ; այրվող տեղանք, կապալառուներ, DNT (դինիտրոտոլուէն); փորող զինամթերք; Պայթուցիկ զինամթերքի վնասազերծում (ՊԶՎ); հանձնում; Ականների վնասի մասին կրթում (ԱՎԻ); Որակի ապահովում (ՈԱ); RDX (1,3,5-տրազասիլոհեքսան; փորձարկման տեղանք</p>
3	1 օգոստոսի 2006թ.  1 դեկտեմբերի 2007թ.	<p>1. Չնչին փոփոխություններ/ավելացումներ նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում: 2. <u>Նոր սահմանումներ</u>՝ շրջակա միջավայր; միջավայրային ասպեկտներ; միջավայրային ազդեցություն; Շրջակա միջավայրի կառավարման համակարգ (ՇՄԿՀ); միջավայրային քաղաքականություն; գենդերային ուղղորդում; Կասկածելի վտանգավոր գոտի (ԿՎԳ). (7 սահմանում). 3. <u>Հեռացված սահմանումներ</u>՝ հողի մշակում; բեկորատվածքի վտանգի գոտի, մեխանիկական կիրառում, ականների սպառնալիք և սպառնալիք (5 սահմանում) 4. <u>Փոփոխված սահմանումներ</u>՝ ատոմիտի և «գնահատման» լրացուցիչ սահմանում է ավելացվել 5. <u>“ՊՊՄ”</u> տերմինի ընդգրկում: 6. “Սպառնալիք” տերմինի հեռացում ողջ հավաքածուից: 7. CWA &amp; IMSMA սահմանումները փոփոխվել են 8. <u>Նոր սահմանումներ</u>՝ ճակատամարտի դաշտ, ՄՈԶ, միջավայրային ազդեցության գնահատում, ներխուժող մեքենա, ականազերծման մեխանիկական աշխատանքներ, ականազերծման մեխանիկական բաժին, մեխանիկական գործիքներ 9. Նշում է ավելացվել բաժին 1-ի “ծավալին”՝ լրամշակված, իսկ նոր սահմանումն ամսաթիվ է ընդգրկում:</p>